ISSN 2956-5995

MUNETIK

Nr 4/2026(16)

ՄՈՒՆԵՏԻԿ

CZASOPISMO MNIEJSZOŚCI ORMIAŃSKIEJ
Հայ-լեհական հասարակական հոգևոր, կրթամշակութային, վերլուծական հանդես

ORMIANIE W POLITYCE POLSKIEJ

ՀԱՅԵՐԸ ԼԵՀԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ



www.munetik.pl

AKT NOBILITACJI PASCHALISA JAKUBOWICZA
NADANY PRZEZ KRÓLA STANISŁAWA AUGUSTA,
5 MARCA 1791 R., MNW

ՓԱՍԽԱԼԻՍ ՅԱԿՈՒԲՈՎԻՉԻ ԱՋՆՎԱԿԱՆԱՑՄԱՆ ԱԿՏԸ,
ՈՐԸ ՇՆՈՐՀՎԵԼ Է ՍՏԱՆԻՍԼԱՎ ՕԳՈՍՏՈՍ ԹԱԳԱՎՈՐԻ ԿՈՂՄԻՑ,
ՄԱՐՏԻ 5, 1791 Թ.,
ՎԱՐՇԱՎԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ԹԱՆԳԱՐԱՆ (MNW)

Drodzy Czytelnicy,

Oddajemy w Państwa ręce czwarte w 2026 roku wydanie czasopisma „MUNETIK” (nr 16), poświęcone najważniejszym wydarzeniom kulturalnym, naukowym, społecznym i religijnym, które w czerwcu i lipcu bieżącego roku kształtowały życie mniejszości ormiańskiej w Polsce.

Szczególne miejsce w tym numerze zajmuje artykuł historyka, prof. dr. Andrzeja A. Zięby z Uniwersytetu Jagiellońskiego, zatytułowany „Od statusu gości do współgospodarzy: Ormianie w polityce polskiej”.

Autor przedstawia dzieje politycznego zaangażowania Ormian polskich od XIV wieku po czasy współczesne, ukazując ich udział w życiu publicznym, państwowym i dyplomatycznym. Pokazuje zarazem, jak na przestrzeni stuleci Ormianie stawali się integralną częścią życia politycznego Rzeczypospolitej, zachowując własną tożsamość narodową i kulturową.

Serdecznie dziękujemy naszym Czytelnikom, partnerom i przyjaciołom za niezmienne zainteresowanie „MUNETIKIEM”, życzliwość oraz wsparcie. Państwa zaufanie jest dla nas najlepszą motywacją do dalszej pracy, rozwijania czasopisma i przygotowywania kolejnych numerów z należytą starannością i odpowiedzialnością.

HRACZJA BOJADŻJAN
Przewodniczący Rady Redakcyjnej

Սիրելի՛ ընթերցողներ,

Ձեր ընթերցանությանն ենք ներկայացնում 2026 թվականի «Մունետիկ» պարբերականի չորրորդ հրատարակությունը (16-րդ համար), որն ամփոփում է ընթացիկ տարվա հունիս և հուլիս ամիսներին Լեհահայոց կյանքում տեղի ունեցած նշանակալի մշակութային, գիտական, հասարակական և կրոնական իրադարձությունները:

Պարբերականի այս համարում ներկայացված է պատմաբան, Յագելոնյան համալսարանի պրոֆեսոր դոկտոր Անջեյ Ժեմբայի «Հյուրի կարգավիճակից մինչև համակեցություն. հայերը լեհական քաղաքականության մեջ» վերտառությամբ հոդվածը:

Հոդվածը ներկայացնում է լեհահայերի քաղաքական ներգրավվածության պատմական զարգացումը՝ XIV դարից մինչև մեր օրերը՝ անդրադառնալով նրանց հասարակական, պետական և դիվանագիտական դերակատարությանը: Հեղինակը ցույց է տալիս, թե ինչպես են հայերը աստիճանաբար ինտեգրվել Լեհաստանի քաղաքական կյանքին՝ պահպանելով իրենց ազգային և մշակութային ինքնությունը:

Մեր անկեղծ շնորհակալությունն ենք հայտնում մեր ընթերցողներին, գործընկերներին և բոլոր բարեկամներին՝ պարբերականի հանդեպ մշտական հետաքրքրության և աջակցության համար: Ձեր ուշադրությունն ու վստահությունը մեզ համար կարևոր խթան են՝ շարունակելու մեր աշխատանքը, լայնորեն հանրահռչակելու պարբերականը և յուրաքանչյուր նոր հրատարակություն պատրաստելու առավել մեծ պատասխանատվությամբ:

Բարի ընթերցանություն:

ՀՐԱՉՅԱ ԲՈՅԱՋՅԱՆ
Խմբագրական խորհրդի նախագահ

SPIS TREŚCI

բովանդակություն

Nr 4/2026(16)

01 **Redakcja**
Słowo od Redakcji
Խմբագրություն
Խմբագրական խոսք ընթերցողին

03 **Wiadomości (czerwiec-lipiec)**
Polityczne, społeczne, kulturalne, edukacyjne
Անցուդարձ (հունիս-հուլիս)
Քաղաքական, հասարակական, մշակութային, կրթական

21 **Andrzej A. Zięba**
Od statusu gości do współgospodarzy:
Ormianie w polityce polskiej
Անջեյ Ժեմբա
Հյուրի կարգավիճակից մինչև համակեցություն.
հայերը լեհական քաղաքականության մեջ

Fot. Festiwal Kultury Ormiańskiej

Podwójny triumf Sargisa Dawtiana w Opolu

■ Sargis Dawtian zdobył 5 czerwca obie główne nagrody konkursu „Premiery" podczas 63. Krajowego Festiwalu Polskiej Piosenki w Opolu. Utwór „Ziemia" przyniósł mu uznanie jury oraz nagrodę publiczności im. Karola Musioła.

Zwycięska piosenka jest osobistą opowieścią o tożsamości i przynależności. Urodzony w Armenii, a wychowany w Polsce wokalista odwołuje się w niej do polskiej kultury, łącząc te odniesienia z ormiańską melodyką. W utworze spotykają się dwa bliskie mu światy, które ukształtowały jego wrażliwość i twórczość.

To drugi sukces Sargisa na opolskiej scenie. W 2019 roku otrzymał nagrodę im. Anny Jantar w konkursie „Debiuty". Siedem lat później powrócił jako autor i wykonawca piosenki, która przekonała zarówno jurorów, jak i widzów.

Artysta jest również znany publiczności Festiwalu Kultury Ormiańskiej. Podczas jego pierwszej edycji, 3 grudnia 2022 roku, wystąpił z zespołem „Armenian Folk Project", prezentując ormiański repertuar.

Młody akordeonista z Polski zwyciężył w Erywaniu

■ W Erywaniu odbył się 6 czerwca XXII Konkurs Eurowizji dla Młodych Muzyków. Po raz pierwszy w historii gospodarzem wydarzenia była Armenia. Zwyciężył reprezentujący Polskę 18-letni akordeonista Michał Stochel.

Polski muzyk wykonał trzecią część „Concerto Classico" Mikołaja Majkusiaka. Jego występ został najwyżej oceniony przez międzynarodowe jury. Stochel został pierwszym akordeonistą, który zwyciężył w historii konkursu. Dla Polski był to już czwarty triumf w Eurowizji dla Młodych Muzyków.

Michał Stochel jest uczniem Zespołu Państwowych Szkół Muzycznych im. Artura Malawskiego w Przemyślu. Na akordeonie gra od siódmego roku życia, a od 2018 roku jest stypendystą Krajowego Funduszu na Rzecz

Սարգիս Դավթյանի կրկնակի հաղթանակը Օպոլեում

■ 2026 թվականի հունիսի 5-ին Սարգիս Դավթյանը Օպոլեում կայացած Լեհական երգի 63-րդ ազգային փառատոնի «Պրեմիերաներ» («Premiery») մրցույթում արժանացավ երկու գլխավոր մրցանակներին: Նրա «Ziemia» («Հող») երգը ստացավ ինչպես ժյուրիի բարձր գնահատականը, այնպես էլ Կարոլ Մուսիոլի անվան հանդիսատեսի մրցանակը:

Հաղթանակած երգը ինքնության և պատկանելության մասին անձնական պատմություն է: Հայաստանում ծնված և Լեհաստանում մեծացած երգիչը ստեղծագործության մեջ անդրադառնում է լեհական մշակույթին՝ այդ հղումները համադրելով հայկական մեղեդայնության հետ: Երգում միահյուսվում են իրեն հարազատ երկու աշխարհները, որոնք ձևավորել են նրա զգայունությունն ու ստեղծագործական ուղին:

Սա Սարգիսի երկրորդ հաջողությունն է Օպոլեի բեմում: 2019 թվականին նա «Դեբյուտներ» («Debiuty») մրցույթում արժանացել էր Աննա Յանտարի անվան մրցանակին: Յոթ տարի անց նա վերադարձավ որպես մի երգի հեղինակ և կատարող, որը գրավեց թե՛ ժյուրիի, թե՛ հանդիսատեսի համակրանքը:

Արտիստը ծանոթ է նաև Հայկական մշակույթի փառատոնի հանդիսատեսին: Փառատոնի առաջին թողարկման ընթացքում՝ 2022 թվականի դեկտեմբերի 3-ին, նա ելույթ ունեցավ «Armenian Folk Project» խմբի հետ՝ ներկայացնելով հայկական երգացանկ:

Լեհաստանցի երիտասարդ ակորդեոնահարը հաղթեց Երևանում

■ 2026 թվականի հունիսի 6-ին Երևանում կայացավ «Եվրատեսիլ» երիտասարդ երաժիշտների XXII մրցույթը: Մրցույթի պատմության մեջ առաջին անգամ այն հյուրընկալեց Հայաստանը: Հաղթող ճանաչվեց Լեհաստանը ներկայացնող 18-ամյա ակորդեոնահար Միխալ Ստոխելը:

Լեհ երաժիշտը կատարեց Միկոլայ Մայկուսյակի «Concerto Classico»-ի երրորդ մասը: Նրա ելույթն արժանացավ միջազգային ժյուրիի ամենաբարձր գնահատականին: Ստոխելը դարձավ մրցույթի պատմության մեջ հաղթանակած առաջին ակորդեոնահարը: Լեհաստանի համար սա արդեն չորրորդ հաղթանակն էր «Եվրատեսիլ» երիտասարդ երաժիշտների մրցույթում:

Միխալ Ստոխելը Պշեմիշլի Արթուր Մալավսկու անվան պետական երաժշտական դպրոցների համալիրի սան է: Նա ակորդեոն է նվագում յոթ տարեկանից, իսկ 2018 թվականից Լեհաստանի Երեխաների աջակցության ազգային հիմնադրամի կրթաթոշակառու է: Ապրիլին նա հաղթել էր նաև «Տարվա երիտասարդ երաժիշտ 2026» մրցույթում՝ արժանանալով գլխավոր և հանդիսատեսի մրցանակներին: Այդ հաղթանակը նրան հնարավորություն տվեց ներկայացնելու Լեհաստանը Երևանում:

Fot. EBU / Public Television of Armenia

Dzieci. W kwietniu zwyciężył także w konkursie „Młody Muzyk Roku 2026", zdobywając Nagrodę Główną i Nagrodę Publiczności. Zwycięstwo zapewniło mu możliwość reprezentowania Polski w Erywaniu.

W konkursie wystąpiło 11 młodych muzyków. Drugie miejsce zajęła reprezentantka Łotwy Sonja Misiņa, grająca na marimbie, a trzecie reprezentująca Armenię flecistka Elen Wirabian. Uczestnikom towarzyszyła Narodowa Orkiestra Filharmonii Armeńskiej.

Konkurs odbył się w Narodowym Akademickim Teatrze Opery i Baletu im. Aleksandra Spendiariana w Erywaniu. Gospodarzem tegorocznej edycji była Publiczna Telewizja Armenii, która przygotowała wydarzenie we współpracy z Europejską Unią Nadawców.

Zwycięstwo partii Pasziniana w wyborach parlamentarnych

■ Umowa Społeczna premiera Nikola Pasziniana zwyciężyła w wyborach parlamentarnych 7 czerwca w Armenii, zachowując większość pozwalającą na samodzielne utworzenie rządu. Według ostatecznych wyników, zatwierdzonych 14 czerwca przez Centralną Komisję Wyborczą, partia zdobyła 49,75 proc. głosów. Frekwencja wyniosła 58,9 proc.

Drugie miejsce zajęła Silna Armenia z poparciem 23,27 proc., a trzecie Sojusz Armenia, który uzyskał 9,92 proc. głosów. W parlamencie liczącym 105 posłów ugrupowaniu Pasziniana przypadły 64 mandaty, Silnej Armenii 29, a Sojuszowi Armenia 12.

Partia premiera nie zdobyła jednak większości konstytucyjnej, do której potrzebowała 70 mandatów. W ocenie Polskiego Instytutu Spraw Międzynarodowych może to utrudnić zakończenie procesu pokojowego z Azerbej-

Մրցույթին մասնակցեցին 11 երիտասարդ երաժիշտներ: Երկրորդ տեղը զբաղեցրեց Լատվիան ներկայացնող մարիմբահար Սոնյա Միսինան, իսկ երրորդը՝ Հայաստանը ներկայացնող ֆլեյտահար Էլեն Վիրաբյանը: Մասնակիցներին նվագակցում էր Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբը:

Մրցույթն անցկացվեց Երևանի Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում: Այս տարվա մրցույթի հյուրընկալող հեռարձակողը Հայաստանի հանրային հեռուստաընկերությունն էր, որը միջոցառումը կազմակերպեց Եվրոպական հեռարձակողների միության հետ համագործակցությամբ:

Նիկոլ Փաշինյանի կուսակցության հաղթանակը խորհրդարանական ընտրություններում

■ Վարչապետ Նիկոլ Փաշինյանի «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը հաղթեց 2026 թվականի հունիսի 7-ին Հայաստանում կայացած խորհրդարանական ընտրություններում՝ պահպանելով այնպիսի մեծամասնություն, որը հնարավորություն է տալիս ինքնուրույն ձևավորել կառավարություն: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից հունիսի 14-ին հաստատված վերջնական արդյունքների համաձայն՝ կուսակցությունը ստացել է ձայների 49,75 տոկոսը: Ընտրություններին մասնակցության ցուցանիշը կազմել է 58,9 տոկոս: Երկրորդ տեղը զբաղեցրել է «Ուժեղ Հայաստան»-ը՝ ստանալով ձայների 23,27 տոկոսը, իսկ երրորդը՝ «Հայաստան» դաշինքը՝ 9,92 տոկոս արդյունքով: 105 պատգամավորից բաղկացած խորհրդարանում Փաշինյանի կուսակցությունը ստացել է 64 մանդատ, «Ուժեղ Հայաստան»-ը՝ 29, իսկ «Հայաստան» դաշինքը՝ 12:

Վարչապետի կուսակցությունը, սակայն, չի ստացել սահմանադրական մեծամասնություն, որի համար անհրաժեշտ էր 70 մանդատ: Լեհաստանի միջազգային հարաբերությունների ինստիտուտի (PISM) գնահատմամբ՝ դա կարող է դժվարացնել Ադրբեջանի հետ խաղաղության գործընթացի ավարտը: Բաքվի իշխանությունները խաղաղության պայմանագրի ստորագրումը պայմանավորում են Հայաստանի Սահմանադրության փոփոխությամբ՝ դրա նախաբանը համարելով տարածքային պահանջների արտահայտություն:

Ընտրություններում վճռորոշ հիմնական հարցերից մեկը երկրի արտաքին քաղաքականության հետագա ուղղությունն էր: Փաշինյանը հանդես էր գալիս Եվրոպական միության և Միացյալ Նահանգների հետ համագործակցության խորացման օգտին: PISM-ի վերլուծության համաձայն՝ նրա հաղթանակը նպաստում է այս ուղղության շարունակմանը, այդ թվում՝ վիզային ռեժիմի ազատականացմանն ուղղված քայլերին և Հայաստան-ԵՄ չափանիշներին մոտեցնող բարեփոխումներին:

Ինչպես հաղորդել է Լեհաստանի մամուլի գործակալությունը (PAP), վարչապետ Դոնալդ Տուսկը շնորհավորել է Փաշինյանին հաղթանակի կապակցությամբ՝ ընդգծելով Հայաստանի եվրոպամետ ուղղության հաստատումը: Հայաստանի քաղաքացիներին շնորհավորել է նաև Լեհաստանի արտաքին

Fot. REUTERS/Hayk Baghdasaryan

dżanem. Władze w Baku uzależniają podpisanie traktatu od zmian w armeńskiej konstytucji, której preambułę uznają za wyraz roszczeń terytorialnych.

Jedną z głównych kwestii rozstrzyganych w wyborach był dalszy kierunek polityki zagranicznej. Paszinian opowiadał się za pogłębianiem współpracy z Unią Europejską i Stanami Zjednoczonymi. Według analizy PISM jego zwycięstwo sprzyja kontynuacji tego kursu, w tym działaniom na rzecz liberalizacji wizowej oraz reform przybliżających Armenię do standardów unijnych.

Jak poinformowała Polska Agencja Prasowa, premier Donald Tusk pogratulował Paszinianowi zwycięstwa, podkreślając potwierdzenie proeuropejskiego kierunku Armenii. Gratulacje jej obywatelom przekazał również minister spraw zagranicznych Radosław Sikorski, deklarując gotowość Polski do wspierania reform zbliżających kraj do Unii Europejskiej.

Grecy zostaną dziesiątą mniejszością narodową w Polsce

■ Prezydent Karol Nawrocki podpisał 11 czerwca ustawę, dzięki której Grecy uzyskają status mniejszości narodowej i własnego przedstawiciela w Komisji Wspólnej Rządu i Mniejszości Narodowych i Etnicznych. Wcześniej nowelizację uchwalił Sejm, a Senat przyjął ją bez poprawek.

Zmiana uzupełnia ustawowy katalog mniejszości narodowych, do którego należy również mniejszość ormiańska. Dla Greków oznacza to objęcie ochroną

գործերի նախարար Ռադոսլավ Սիկորսկին՝ հայտնելով Լեհաստանի պատրաստակամությունը՝ աջակցելու երկիրը Եվրոպական Միությանը մոտեցնող բարեփոխումներին:

Հույները կդառնան Լեհաստանի տասներորդ ազգային փոքրամասնությունը

■ 2026 թվականի հունիսի 11-ին նախագահ Կարոլ Նավրոցկին ստորագրել է օրենք, որի շնորհիվ հույները կստանան ազգային փոքրամասնության կարգավիճակ և իրենց ներկայացուցիչը՝ Կառավարության և ազգային ու էթնիկ փոքրամասնությունների համատեղ հանձնաժողովում: Ավելի վաղ օրենսդրական փոփոխությունն ընդունել էր Սեյմը, իսկ Սենատը հավանություն էր տվել դրան՝ առանց փոփոխությունների:

Փոփոխությունը լրացնում է օրենքով ճանաչված ազգային փոքրամասնությունների ցանկը, որի մեջ ներառված է նաև հայկական ազգային փոքրամասնությունը: Հույների համար դա նշանակում է օրենքով նախատեսված պաշտպանության տարածում նրանց նկատմամբ, ինչպես նաև կառավարության հետ լեզվին, մշակույթին և ինքնության պահպանմանը վերաբերող երկխոսությանը անմիջական մասնակցություն:

Նոր դրույթներն ուժի մեջ կմտնեն 2026 թվականի դեկտեմբերի 16-ին: Միայն այդ ժամանակ հույները պաշտոնապես կմիանան օրենքով ճանաչված ազ-

przewidzianą w ustawie oraz bezpośredni udział w dialogu z rządem dotyczącym języka, kultury i zachowania tożsamości.

Nowe przepisy wejdą w życie 16 grudnia 2026 roku. Dopiero wówczas Grecy formalnie dołączą do grona uznanych ustawowo mniejszości narodowych, a następnie rozpocznie się procedura powołania ich przedstawiciela do Komisji Wspólnej.

O inicjatywach mniejszości ormiańskiej w Ministerstwie Kultury

■ Minister kultury i dziedzictwa narodowego Marta Cienkowska spotkała się 12 czerwca z Hraczją Bojadżjanem, przedstawicielem mniejszości ormiańskiej w Komisji Wspólnej Rządu i Mniejszości Narodowych i Etnicznych.

Podczas spotkania w siedzibie resortu rozmawiano o sytuacji mniejszości ormiańskiej w Polsce, działalności organizacji ormiańskich oraz inicjatywach służących zachowaniu i popularyzacji ormiańskiej kultury i dziedzictwa.

Fot. Instytut Ormiański

Fot. Instytut Ormiański

Fot. Diecezja Wrocławsko-Szczecińska

գային փոքրամասնությունների շարքին, որից հետո կսկսվի Կառավարության և ազգային ու էթնիկ փոքրամասնությունների համատեղ հանձնաժողովում նրանց ներկայացուցչի նշանակման ընթացակարգը:

Հայկական ազգային փոքրամասնության նախաձեռնությունների մասին՝ Մշակույթի նախարարությունում

■ Մշակույթի և ազգային ժառանգության նախարար Մարտա Ցիենկովսկան հունիսի 12-ին հանդիպել է Կառավարության և ազգային ու էթնիկ փոքրամասնությունների համատեղ հանձնաժողովում հայկական ազգային փոքրամասնության ներկայացուցիչ Հրաչյա Բոյաջյանի հետ:

Նախարարության կենտրոնական շենքում կայացած հանդիպման ընթացքում քննարկվել են Լեհաստանում հայկական ազգային փոքրամասնության իրավիճակը, հայկական կազմակերպությունների գործունեությունը, ինչպես նաև հայկական մշակույթի և ժառանգության պահպանմանն ու հանրահռչակմանն ուղղված նախաձեռնությունները:

Հայկական ազգային փոքրամասնության ներկայացուցիչը նախարարին փոխանցել է «Munetik» ամսագրի վերջին համարները և Մարտա Ցիենկովսկային հրավիրել Հայկական մշակույթի V փառատոնի բացման հանդիսությանը, որը նախատեսված է սեպտեմբերի 3-ին Կատովիցեի Սիլեզիայի Ֆիլհարմոնիայում:

Զրույցի ընթացքում քննարկվել են նաև Լեհաստանում հայկական մշակույթի և Հայաստանում լեհական մշակույթի հանրահռչակման հարցերը:

Կառավարության և ազգային ու էթնիկ փոքրամասնությունների համատեղ հանձնաժողովի 92-րդ նիստը

■ Հունիսի 16-ին Լեհաստանի ներքին գործերի և վարչակազմի նախարարության կենտրոնական շենքում տեղի ունեցավ Կառավարության և ազգային ու էթնիկ փոքրամասնությունների համատեղ հանձնաժողովի 92-րդ նիստը: Նիստը համանախագահում էին Ներքին գործերի և վարչակազմի նախարարության պետական քարտուղար Տոմաշ Շիմանսկին և

Przedstawiciel mniejszości ormiańskiej przekazał minister najnowsze numery czasopisma „Munetik” oraz zaprosił Martę Cienkowską na inaugurację V Festiwalu Kultury Ormiańskiej, zaplanowaną na 3 września w Filharmonii Śląskiej w Katowicach.

Rozmowa dotyczyła także promocji kultury ormiańskiej w Polsce oraz polskiej kultury w Armenii.

XCII posiedzenie Komisji Wspólnej Rządu i Mniejszości Narodowych i Etnicznych

■ W siedzibie Ministerstwa Spraw Wewnętrznych i Administracji odbyło się 16 czerwca XCII posiedzenie Komisji Wspólnej Rządu i Mniejszości Narodowych i Etnicznych. Obradom współprzewodniczyli sekretarz stanu w MSWiA Tomasz Szymański oraz Grzegorz Kuprianowicz, współprzewodniczący Komisji ze strony mniejszości.

Podczas posiedzenia omawiano m.in. zasady finansowania działań służących ochronie i rozwojowi tożsamości mniejszości w 2027 roku, sytuację mniejszości narodowych i etnicznych w kontekście przejawów ksenofobii, ich obecność w mediach publicznych oraz możliwości wykorzystania funduszy europejskich na działania skierowane do mniejszości.

W dyskusji dotyczącej mediów publicznych Hraczja Bojadżjan, przedstawiciel mniejszości ormiańskiej, zwrócił uwagę na niewielką obecność tematyki ormiańskiej w publicznej telewizji i radiofonii. Podkreślił potrzebę zapewnienia mniejszościom narodowym i etnicznym większej i bardziej systematycznej obecności w mediach publicznych.

XCII posiedzenie miało również szczególny charakter ze względu na pierwszy udział przedstawicieli mniejszości greckiej po jej uznaniu za mniejszość narodową w Polsce. W obradach uczestniczyli także ambasador Republiki Greckiej w Polsce Niki Kamba, konsul Spyros Vourtsis oraz poseł Monika Rosa, współprzewodnicząca sejmowej Komisji Mniejszości Narodowych i Etnicznych.

փոքրամասնությունների կողմից Հանձնաժողովի համանախագահ Գժեգոժ Կուպրիանովիչը:

Նիստի ընթացքում քննարկվեցին, ի թիվս այլ հարցերի, 2027 թվականին փոքրամասնությունների ինքնության պաշտպանությանն ու զարգացմանն ուղղված գործունեության ֆինանսավորման սկզբունքները, ազգային և էթնիկ փոքրամասնությունների իրավիճակը՝ այլատյացության դրսևորումների համատեքստում, նրանց ներկայությունը հանրային լրատվամիջոցներում, ինչպես նաև փոքրամասնություններին ուղղված ծրագրերի իրականացման համար եվրոպական հիմնադրամների միջոցների օգտագործման հնարավորությունները:

Հանրային լրատվամիջոցներին վերաբերող քննարկման ընթացքում հայկական ազգային փոքրամասնության ներկայացուցիչ Հրաչյա Բոյաջյանը ուշադրություն հրավիրեց հանրային հեռուստատեսությունում և ռադիոյում հայկական թեմատիկայի սահմանափակ ներկայության վրա: Նա ընդգծեց հանրային լրատվամիջոցներում ազգային և էթնիկ փոքրամասնությունների առավել լայն և համակարգված ներկայությունն ապահովելու անհրաժեշտությունը:

92-րդ նիստն առանձնահատուկ նշանակություն ուներ նաև այն պատճառով, որ Լեհաստանում ազգային փոքրամասնություն ճանաչվելուց հետո դրան առաջին անգամ մասնակցեցին հունական փոքրամասնության ներկայացուցիչները: Նիստին մասնակցեցին նաև Լեհաստանում Հունաստանի Հանրապետության դեսպան Նիկի Կամբան, հյուպատոս Սպիրոս Վուրցիսը և պատգամավոր Մոնիկա Ռոսան՝ Սեյմի Ազգային և էթնիկ փոքրամասնությունների հանձնաժողովի համանախագահը:

Հրաչյա Բոյաջյանը շնորհավորեց հունական փոքրամասնության ներկայացուցիչներին՝ ընդգծելով հայերին և հույներին կապող առանձնահատուկ հարաբերությունները, որոնք պայմանավորված են ինչպես երկու ժողովուրդների բազմադարյա հարևանությամբ ու մերձավորությամբ, այնպես էլ Օսմանյան

Fot. MSWiA

Hraczja Bojadżjan złożył przedstawicielom mniejszości greckiej gratulacje, podkreślając szczególne więzi łączące Ormian i Greków, wynikające zarówno z wielowiekowego sąsiedztwa i bliskości obu narodów, jak i tragicznych doświadczeń ludobójstw dokonanych w Imperium Osmańskim. Wyraził zadowolenie z obecności Greków w Komisji, zaznaczając, że na formalne uznanie za mniejszość narodową zasługiwali od dawna.

Ormiańskie mikrodywaniki we Wrocławiu

■ We Wrocławiu odbył się 16 czerwca warsztat tkania ormiańskich mikrodywaników, zorganizowany w ramach projektu „Ormianie na Śląsku". Spotkanie w Ołbińskim Centrum Aktywności Lokalnej poprowadziła Tania Sajegh, która przygotowała również materiały potrzebne uczestnikom do wykonania własnych prac.

Fot. Instytut Piramowicza

Warsztat był częścią zadania „Warsztaty edukacyjne «Ormianie na Śląsku» wraz z wystawą oraz archiwum historii mówionej Ormian polskich", realizowanego przez Instytut Grzegorza Piramowicza. Projekt został sfinansowany z dotacji Ministerstwa Spraw Wewnętrznych i Administracji.

Armen Grigorian na Konferencji na rzecz Odbudowy Ukrainy w Gdańsku

կայսրությունում իրականացված ցեղասպանությունների ողբերգական փորձառությամբ: Նա գոհունակություն հայտնեց Հանձնաժողովում հույների ներկայության կապակցությամբ՝ նշելով, որ նրանք վաղուց էին արժանի ազգային փոքրամասնության պաշտոնական ճանաչմանը:

Հայկական միկրոգորգեր Վրոցլավում

■ Հունիսի 16-ին Վրոցլավում տեղի ունեցավ հայկական միկրոգորգերի գործման արհեստանոց, որը կազմակերպվել էր «Հայերը Սիլեզիայում» ծրագրի շրջանակում: Օլբինի տեղական գործունեության կենտրոնում կայացած հանդիպումը վարեց Տանյա Սայեղը, որը նաև պատրաստել էր մասնակիցներին սեփական աշխատանքները ստեղծելու համար անհրաժեշտ նյութերը:

Արհեստանոցը ««Հայերը Սիլեզիայում» կրթական սեմինարներ՝ ցուցահանդեսով և լեհահայերի բանավոր պատմության արխիվով» ծրագրային առաջադրանքի մի մասն էր, որն իրականացնում էր Գժեգոժ Պիրամովիչի ինստիտուտը: Ծրագիրը ֆինանսավորվել է Լեհաստանի ներքին գործերի և վարչակազմի նախարարության դրամաշնորհի միջոցներով:

Արմեն Գրիգորյանը Գդանսկում՝ Ուկրաինայի վերականգնման համաժողովին

■ Հայաստանի Հանրապետության Անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանը հունիսի 25-ին Գդանսկում մասնակցեց Ուկրաինայի վերականգնման համաժողովին (Ukraine Recovery Conference - URC 2026): Նրա այցը Լեհաստան աշխատանքային բնույթ էր կրում:

Գդանսկի AMBEREXPO կենտրոնում տեղի ունեցած համաժողովը կազմակերպվել էր Լեհաստանի ու Ուկրաինայի համատեղ ջանքերով: Այն նվիրված էր Ուկրաինայի վերականգնմանն ու արդիականացմանը, ինչպես նաև միջազգային աջակցության և ներդրումների ներգրավմանը:

Միջոցառմանը մասնակցեցին տարբեր պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ: Համաժողովը բացեց Լեհաստա-

Fot. ARA

■ Sekretarz Rady Bezpieczeństwa Republiki Armenii Armen Grigorian uczestniczył 25 czerwca w Konferencji na rzecz Odbudowy Ukrainy (Ukraine Recovery Conference – URC 2026), odbywającej się w Gdańsku. Jego pobyt w Polsce odbył się w ramach wizyty roboczej.

Konferencja obradowała w gdańskim AMBEREXPO i została zorganizowana wspólnie przez Polskę i Ukrainę. Była poświęcona odbudowie i modernizacji Ukrainy oraz mobilizacji międzynarodowego wsparcia i inwestycji.

W wydarzeniu uczestniczyli przedstawiciele państw i organizacji międzynarodowych. Konferencję otworzył premier Donald Tusk, a w inauguracji wzięli udział m.in. premier Ukrainy Julia Swyrydenko, przewodnicząca Komisji Europejskiej Ursula von der Leyen oraz przewodniczący Rady Europejskiej António Costa.

Polska i Armenia coraz bliżej. Samorządy budują trwałe partnerstwo

■ W dniu 19 czerwca do Ciechanowca przyjechała 22-osobowa delegacja z Armenii. W jej skład weszli burmistrz Jechegnadzoru Dawid Harutiunjan, burmistrz

Fot. Instytut Ormiański

Waiku Mchitar Matewosjan, wiceburmistrz Jechegnadzoru Wardan Awagian, nauczyciele oraz 14 dzieci i młodzieży z obu miast. Wizyta, która trwała do 26 czerwca, odbyła się na zaproszenie burmistrza Ciechanowca Eugeniusza Święckiego. W tym czasie w Ciechanowcu przebywał również konsul honorowy Republiki Armenii Hraczja Bojadżjan, inicjator współpracy polskich i ormiańskich samorządów.

Pierwszym formalnym rezultatem tej współpracy było podpisanie w październiku 2025 roku umowy partnerskiej między Ciechanowcem a Jechegnadzorem. Czerwcowa wizyta była kontynuacją rozpoczętych działań i jednocześnie przygotowaniem do nawiązania stałych relacji z Waikiem, drugim miastem regionu Wajoc Dzor.

Delegacja przebywała w Polsce podczas Dni Ciechanowca, odbywających się od 19 do 21 czerwca. Ormiańscy goście uczestniczyli w wydarzeniach przygotowanych z okazji święta miasta, w tym w „Wiankach na

նի վարչապետ Դոնալդ Տուսկը, իսկ բացման արարողությանը, ի թիվս այլոց, մասնակցեցին Ուկրաինայի վարչապետ Յուլիա Սվիրիդենկոն, Եվրոպական հանձնաժողովի նախագահ Ուրսուլա ֆոն դեր Լայենը և Եվրոպական խորհրդի նախագահ Անտոնիու Կոշտան:

Լեհաստանն ու Հայաստանը՝ ավելի ու ավելի մոտ: Տեղական ինքնակառավարման մարմինները կառուցում են կայուն գործընկերություն

■ 2026 թվականի հունիսի 19-ին Ցեխանովեց ժամանեց Հայաստանի 22 հոգուց բաղկացած պատվիրակություն: Պատվիրակության կազմում էին Եղեգնաձորի համայնքապետ Դավիթ Հարությունյանը, Վայքի համայնքապետ Մխիթար Մաթևոսյանը, Եղեգնաձորի համայնքապետի տեղակալ Վարդան Ավագյանը, ուսուցիչներ, ինչպես նաև երկու քաղաքներից 14 երեխաներ և երիտասարդներ: Այցը, որը տևեց մինչև հունիսի 26-ը, տեղի ունեցավ Ցեխանովեցի քաղաքապետ Էուգենիուշ Սվենցկու հրավերով: Այդ օրերին Ցեխանովեցում էր գտնվում նաև Հայաստանի Հանրապետության պատվավոր հյուպատոս Հրաչյա Բոյաջյանը՝ լեհական և հայկական տեղական ինքնակառավարման մարմինների համագործակցության նախաձեռնողը:

Այս համագործակցության առաջին պաշտոնական արդյունքը 2025 թվականի հոկտեմբերին Ցեխանովեցի և Եղեգնաձորի միջև գործընկերության համաձայնագրի ստորագրումն էր: Հունիսյան այցը մեկնարկած համագործակցության շարունակությունն էր և միաժամանակ նախապատրաստություն՝ Վայքի՝ Վայոց ձորի մարզի երկրորդ քաղաքի հետ մշտական հարաբերություններ հաստատելու համար:

Պատվիրակությունը ժամանեց Ցեխանովեցի օրերի ընթացքում, որոնք անցկացվում էին հունիսի 19-ից 21-ը: Հայ հյուրերը մասնակցեցին քաղաքի տոնի առթիվ կազմակերպված միջոցառումներին, այդ թվում՝ «Wianki na Nurcu» միջոցառմանը: Սա հնարավորություն էր ծանոթանալու տեղի ավանդույթներին, մշակույթին և բնակիչներին:

Ծրագրի զգալի մասը նվիրված էր երեխաներին և երիտասարդներին: Կազմակերպվեցին այցեր, հանդիպումներ լեհ հասակակիցների հետ և շրջագայություններ տարածաշրջանում: Հյուրերն այցելեցին, ի թիվս այլ վայրերի, քահանա Քշիշտոֆ Կլուկի անվան գյուղատնտեսության թանգարան: Երիտասարդ հայերի մի մասը հյուրընկալվեցին լեհական ընտանիքներում, ինչի շնորհիվ նրանք հնարավորություն ունեցան ծանոթանալու իրենց հյուրընկալողների առօրյա կյանքին և նրանց հետ ժամանակ անցկացնելու նաև պաշտոնական ծրագրից դուրս:

Երիտասարդ հայերի Ցեխանովեցում գտնվելը երեխաների և երիտասարդների երկկողմ փոխանակման առաջին մասն էր: Հայաստանից ժամանած մասնակիցները ծանոթանում էին Լեհաստանին, մասնակցում տեղի միջոցառումներին և ժամանակ անցկացնում իրենց լեհ հասակակիցների հետ:

Հունիսի 23-ին Հայաստանի ներկայացուցիչները

Fot. Instytut Ormiański

Nurcu". Była to okazja do poznania miejscowych tradycji, kultury i mieszkańców.

Znaczną część programu poświęcono dzieciom i młodzieży. Odbyły się warsztaty, spotkania z polskimi rówieśnikami i wycieczki po regionie. Goście odwiedzili m.in. Muzeum Rolnictwa im. ks. Krzysztofa Kluka. Część młodych Ormian zamieszkała u polskich rodzin, dzięki czemu mogła poznać codzienne życie swoich gospodarzy i spędzić z nimi czas także poza oficjalnym programem.

Pobyt młodych Ormian w Ciechanowcu był pierwszą częścią dwustronnej wymiany dzieci i młodzieży. Uczestnicy z Armenii poznawali Polskę, brali udział w miejscowych wydarzeniach i spędzali czas z polskimi rówieśnikami.

W dniu 23 czerwca przedstawiciele Armenii wzięli udział w obchodach 85. rocznicy zbrodni sowieckiej pod Zabłudowem. Wspólnie z polskimi gospodarzami uczcili pamięć ofiar. Udział w uroczystości pozwolił ormiańskim uczestnikom poznać również historię regionu i wydarzenia zajmujące ważne miejsce w pamięci jego mieszkańców.

Natomiast 25 czerwca burmistrz Ciechanowca Eugeniusz Święcki i burmistrz Waiku Mchitar Matewosjan podpisali list intencyjny dotyczący współpracy obu miast. Dokument przewiduje wspólne działania w dziedzinie kultury, edukacji, turystyki, wymiany młodzieży i rozwoju lokalnego.

W uroczystości uczestniczyli przedstawiciele obu samorządów, m.in. starosta wysokomazowiecki Bogdan Zieliński, radni, przedstawiciele instytucji oraz mieszkańcy. Kulturę Armenii zaprezentował zespół tańca ludowego „Nrane" z Waiku.

Czerwcowa wizyta nie ograniczała się do spotkań przedstawicieli władz. Ważną jej częścią były bezpośrednie kontakty mieszkańców, zwłaszcza dzieci, młodzieży i rodzin zaangażowanych w wymianę.

Fot. Instytut Ormiański

մասնակցեցին Զաբլուդովի մոտ խորհրդային հանցագործության 85-րդ տարելիցին նվիրված հիշատակի միջոցառումներին: Լեհ հյուրընկալողների հետ միասին նրանք հարգեցին զոհերի հիշատակը:

Հունիսի 25-ին Ցեխանովեցի քաղաքապետ Էուգենիուշ Սվենցկին և Վայքի համայնքապետ Մխիթար Մաթևոսյանը ստորագրեցին երկու քաղաքների համագործակցության վերաբերյալ հեռանկարների հուշագիր: Փաստաթուղթը նախատեսում է համատեղ գործունեություն մշակույթի, կրթության, զբոսաշրջության, երիտասարդական փոխանակումների և տեղական զարգացման ոլորտներում:

Արարողությանը մասնակցեցին երկու տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներ, այդ թվում՝ Վիսոկե Մազովեցկե շրջանի ղեկավար Բոգդան Զելինսկին, ավագանու անդամներ,

Ormiańska delegacja zakończyła swój pobyt w Polsce 26 czerwca. Kolejnym etapem wymiany będzie wyjazd polskich dzieci i młodzieży do Armenii. Odwiedzą Jechegnadzor i Waik, poznają region Wajoc Dzor i spotkają się z ormiańskimi rówieśnikami, których wcześniej gościli w Polsce.

Przedstawiciel mniejszości ormiańskiej w Radzie Działalności Pożytku Publicznego

■ W dniu 29 czerwca ogłoszono wyniki naboru uzupełniającego do Rady Działalności Pożytku Publicznego VIII kadencji. Wśród czterech nowych członków Rady znalazł się Hraczja Bojadżjan, prezes Instytutu Ormiańskiego, przedstawiciel mniejszości ormiańskiej w Komisji Wspólnej Rządu i Mniejszości Narodowych i Etnicznych oraz konsul honorowy Republiki Armenii.

Do naboru zgłoszono 18 kandydatur reprezentujących sektor pozarządowy, z których 15 spełniło wymagania formalne. Jak poinformował Komitet do Spraw Pożytku Publicznego, ostatecznego wyboru dokonano po szczegółowym zapoznaniu się z doświadczeniem, dorobkiem oraz dotychczasowymi osiągnięciami kandydatów w działalności społecznej i publicznej. Podkreślono również, że nowi członkowie reprezentują różne obszary działalności społecznej, w tym środowiska dotychczas niereprezentowane w Radzie tej kadencji.

Powołanie Hraczji Bojadżjana ma szczególne znaczenie także z punktu widzenia mniejszości narodowych i etnicznych. Jest on jedynym ich przedstawicielem w Radzie Działalności Pożytku Publicznego VIII kadencji. Tym samym w pracach tego ogólnopolskiego gremium znalazła się również perspektywa mniejszości narodowych i etnicznych, reprezentowana przez przedstawiciela mniejszości ormiańskiej.

Rada Działalności Pożytku Publicznego jest organem opiniodawczo-doradczym i forum współpracy administracji publicznej z sektorem pozarządowym. Do jej zadań należy m.in. opiniowanie i inicjowanie rozwiązań dotyczących działalności pożytku publicznego i wolontariatu.

Przewodniczący Komitetu
do spraw Pożytku Publicznego
Jan Grabiec

Warszawa, 29 czerwca 2026 r.

Pan
Hraczja Bojadżjan
Ormiańsko-Polski Komitet Społeczny

Na podstawie art. 36 ust. 2 pkt 1
ustawy z dnia 24 kwietnia 2003 r.
o działalności pożytku publicznego i o wolontariacie
(Dz. U. z 2025 r. poz. 1338)

powołuję

Pana z dniem 29 czerwca 2026 roku na członka Rady Działalności Pożytku Publicznego VIII kadencji.

Z upoważnienia
Przewodniczącego Komitetu do spraw Pożytku Publicznego

Adriana Porowska
Sekretarz Stanu w Kancelarii Prezesa Rady Ministrów
Wiceprzewodnicząca Komitetu do spraw Pożytku Publicznego

Fot. Hraczji Bojadżjana

հաստատությունների ներկայացուցիչներ և բնակիչներ: Հայկական մշակույթը ներկայացրեց Վայքի «Նռանե» ժողովրդական պարի համույթը:

Հունիսյան այցը չէր սահմանափակվում իշխանությունների ներկայացուցիչների հանդիպումներով: Դրա կարևոր մասն էին բնակիչների անմիջական շփումները, հատկապես՝ փոխանակման ծրագրում ներգրավված երեխաների, երիտասարդների և ընտանիքների միջև:

Հունիսի 26-ին պատվիրակությունն ավարտեց իր այցը Լեհաստան: Փոխանակման հաջորդ փուլը կլինի լեհ երեխաների և երիտասարդների այցը Հայաստան: Նրանք կայցելեն Եղեգնաձոր և Վայք, կծանոթանան Վայոց ձորի մարզին և կհանդիպեն իրենց հայ հասակակիցների հետ, որոնց ավելի վաղ հյուրընկալել էին Լեհաստանում:

Հայկական փոքրամասնության ներկայացուցիչը՝ Հանրային շահի գործունեության խորհրդում

■ Հունիսի 29-ին հրապարակվեցին Հանրային շահի գործունեության խորհրդի VIII կազմի համալրման նպատակով անցկացված ընտրության արդյունքները: Խորհրդի չորս նոր անդամների թվում է Հրաչյա Բոյաջյանը՝ Հայկական ինստիտուտի նախագահը, Կառավարության և ազգային ու էթնիկ փոքրամասնությունների համատեղ հանձնաժողովում հայկական փոքրամասնության ներկայացուցիչը և Հայաստանի Հանրապետության պատվավոր հյուպատոսը:

Ընտրությանը ներկայացվել էր հասարակական կազմակերպությունների ոլորտը ներկայացնող 18 անդամի թեկնածություն, որոնցից 15-ը բավարարել էին նախնական պահանջները: Ինչպես տեղեկացրել է Հանրային շահի հարցերով կոմիտեն, վերջնական ընտրությունը կատարվել է թեկնածուների փորձի, գործունեության արդյունքների, ինչպես նաև հասարակական և հանրային գործունեության ոլորտում նրանց մինչ այդ ունեցած ձեռքբերումների մանրամասն ուսումնասիրությունից հետո: Ընդգծվել է նաև, որ նոր անդամները ներկայացնում են հասարակական գործունեության տարբեր ոլորտներ, այդ թվում՝ այն շրջանակները, որոնք խորհրդի այս կազմում մինչ այժմ ներկայացված չէին:

Հրաչյա Բոյաջյանի նշանակումն առանձնահատուկ նշանակություն ունի նաև ազգային և էթնիկ փոքրամասնությունների տեսանկյունից: Նա Հանրային շահի գործունեության խորհրդի VIII կազմում նրանց միակ ներկայացուցիչն է: Այսպիսով, համապետական այս մարմնի աշխատանքներում ներկայացված է նաև ազգային և էթնիկ փոքրամասնությունների տեսակետը՝ հայկական փոքրամասնության ներկայացուցչի միջոցով:

Հանրային շահի գործունեության խորհուրդը խորհրդատվական ու խորհրդակցական մարմին է և հանրային վարչակազմի ու հասարակական կազմակերպությունների ոլորտի համագործակցության հարթակ: Նրա խնդիրների շարքում են, ի թիվս այլոց, հանրային շահի գործունեության և կամավորության ոլորտներին վերաբերող լուծումների վերաբերյալ կարծիքների ներկայացումն ու նոր նախաձեռնությունների առաջադրումը:

Fot. MFA Armenia

Armenia realizuje plan liberalizacji wizowej z Unią Europejską

■ Przedstawiciele Armenii i Unii Europejskiej omówili 1 lipca w Erywaniu postępy w realizacji Planu Działań na rzecz Liberalizacji Wizowej. Jego wykonanie ma stworzyć warunki do zniesienia obowiązku wizowego dla obywateli Armenii podróżujących na krótkie pobyty do państw strefy Schengen.

Dialog wizowy między Armenią a Unią Europejską rozpoczął się we wrześniu 2024 roku. W listopadzie 2025 roku Komisja Europejska przekazała władzom Armenii Plan Działań określający warunki, które kraj musi spełnić. Dotyczą one m.in. bezpieczeństwa dokumentów, zarządzania granicami i migracją, bezpieczeństwa publicznego oraz praw podstawowych.

Proces ten ma również polski wymiar. Podczas spotkania z delegacją Polsko-Armeńskiej Grupy Parlamentarnej w czerwcu 2025 roku wiceminister spraw zagranicznych Armenii Wahan Kostanjan podziękował Polsce za wsparcie w uruchomieniu dialogu Armenia–Unia Europejska dotyczącego liberalizacji wizowej. W kolejnych miesiącach polskie władze deklarowały poparcie dla pogłębiania współpracy Armenii z Unią Europejską i gotowość dzielenia się polskimi doświadczeniami związanymi z procesami reform.

W 2026 roku Armenia otrzymała pierwszy raport Komisji Europejskiej dotyczący realizacji Planu Działań. Dokument zawiera ocenę dotychczasowych postępów oraz wskazuje działania, które powinny zostać podjęte w dalszej części procesu.

Zniesienie obowiązku wizowego nie oznacza przystąpienia Armenii do strefy Schengen. Po pomyślnym zakończeniu procesu obywatele Armenii mogliby podróżować bez wiz na krótkie pobyty, do 90 dni w okre-

Հայաստանն իրականացնում է Եվրոպական Միության հետ վիզային ռեժիմի ազատականացման ծրագիրը

■ 2026 թվականի հուլիսի 1-ին Երևանում Հայաստանի և Եվրոպական Միության ներկայացուցիչները քննարկեցին Վիզային ռեժիմի ազատականացման գործողությունների ծրագրի իրականացման առաջընթացը: Դրա իրականացումը պետք է պայմաններ ստեղծի Շենգենյան գոտու երկրներ կարճաժամկետ այցեր կատարող Հայաստանի քաղաքացիների համար վիզային պահանջի վերացման համար:

Հայաստանի և Եվրոպական միության միջև վիզային երկխոսությունը մեկնարկել է 2024 թվականի սեպտեմբերին: 2025 թվականի նոյեմբերին Եվրոպական հանձնաժողովը Հայաստանի իշխանություններին փոխանցել է Գործողությունների ծրագիրը, որը սահմանում է երկրի կողմից կատարման ենթակա պայմանները: Դրանք վերաբերում են, ի թիվս այլ հարցերի, փաստաթղթերի անվտանգությանը, սահմանների և միգրացիայի կառավարմանը, հանրային անվտանգությանը և հիմնարար իրավունքներին:

Այս գործընթացն ունի նաև լեհական բաղադրիչ: 2025 թվականի հունիսին Լեհաստան-Հայաստան խորհրդարանական խմբի պատվիրակության հետ հանդիպման ժամանակ Հայաստանի արտաքին գործերի նախարարի տեղակալ Վահան Կոստանյանը շնորհակալություն հայտնեց Լեհաստանին՝ վիզային ռեժիմի ազատականացման վերաբերյալ Հայաստան-Եվրոպական միություն երկխոսության մեկնարկին ցուցաբերած աջակցության համար: Հաջորդ ամիսներին Լեհաստանի իշխանությունները հայտարարում էին Հայաստանի և Եվրոպական միության միջև համագործակցության խորացմանն աջակցելու և բարեփոխումների գործընթացների հետ

sie 180 dni. Obecnie nadal obowiązuje ruch wizowy, a obywatele Armenii podróżujący do Polski muszą posiadać wizę Schengen.

Unia Europejska nie wyznaczyła terminu zakończenia procesu. Zniesienie obowiązku wizowego będzie uzależnione od spełnienia przez Armenię wymaganych kryteriów i zakończenia odpowiednich procedur po stronie Unii Europejskiej.

Koncert Sofii Bagdasarian w Łodzi

■ W Akademii Muzycznej w Łodzi odbył się 2 lipca koncert Sofii Bagdasarian „Głosy pamięci. Dialog muzyczny między Polską a Armenią". Artystka przebywała w Polsce jako stypendystka programu „Gaude Polonia" Narodowego Centrum Kultury.

Fot. NCK

Program koncertu połączył twórczość Stanisława Moniuszki i Komitasa. Utwory polskiego i ormiańskiego kompozytora pozwoliły zaprezentować tradycje muzyczne obu krajów oraz ich znaczenie dla zachowania narodowego dziedzictwa.

Koncert odbył się w Sali Kameralnej Akademii Muzycznej w Łodzi i był częścią projektu realizowanego przez Sofię Bagdasarian w ramach pobytu stypendialnego w Polsce.

Armenia wzmacnia współpracę z UNESCO

■ W dniu 10 lipca w Paryżu minister edukacji, nauki, kultury i sportu Armenii Żanna Andreasjan spotkała się

կապված լեհական փորձը կիսելու պատրաստակամության մասին:

2026 թվականին Հայաստանը ստացել է Եվրոպական հանձնաժողովի առաջին զեկույցը՝ Գործողությունների ծրագրի իրականացման վերաբերյալ: Փաստաթուղթը պարունակում է մինչ այժմ արձանագրված առաջընթացի գնահատականը և մատնանշում այն քայլերը, որոնք պետք է ձեռնարկվեն գործընթացի հետագա փուլում:

Վիզային պահանջի վերացումը չի նշանակում Հայաստանի անդամակցություն Շենգենյան գոտուն: Գործընթացի հաջող ավարտից հետո Հայաստանի քաղաքացիները կարող են առանց վիզայի կարճաժամկետ ուղևորություններ կատարել՝ մինչև 90 օր՝ յուրաքանչյուր 180-օրյա ժամանակահատվածում: Ներկայումս վիզային ռեժիմը շարունակում է գործել, և Լեհաստան մեկնող Հայաստանի քաղաքացիները պետք է ունենան Շենգենյան վիզա:

Եվրոպական միությունը գործընթացի ավարտի ժամկետ չի սահմանել: Վիզային պահանջի վերացումը կախված կլինի Հայաստանի կողմից անհրաժեշտ չափանիշների կատարումից և Եվրոպական միության կողմից համապատասխան ընթացակարգերի ավարտից:

Սոֆիա Բաղդասարյանի համերգը Լոձում

■ 2026 թվականի հուլիսի 2-ին Լոձի երաժշտական ակադեմիայում տեղի ունեցավ Սոֆիա Բաղդասարյանի «Հիշողության ձայներ. երաժշտական երկխոսություն Լեհաստանի և Հայաստանի միջև» համերգը: Արվեստագետը Լեհաստանում էր գտնվում՝ որպես Մշակույթի ազգային կենտրոնի «Gaude Polonia» ծրագրի կրթաթոշակառու:

Համերգային ծրագիրը միավորեց Ստանիսլավ Մոնյուշկոյի և Կոմիտասի ստեղծագործությունները: Լեհ և հայ կոմպոզիտորների ստեղծագործությունները հնարավորություն տվեցին ներկայացնելու երկու երկրների երաժշտական ավանդույթներն ու դրանց նշանակությունը ազգային ժառանգության պահպանման գործում:

Համերգը տեղի ունեցավ Լոձի երաժշտական ակադեմիայի Կամերային դահլիճում: Այն Սոֆիա Բաղդասարյանի՝ Լեհաստանում կրթաթոշակային ծրագրով գտնվելու ընթացքում իրականացվող նախագծի մի մասն էր:

Հայաստանն ամրապնդում է համագործակցությունը ՅՈՒՆԵՍԿՕ-ի հետ

■ 2026 թվականի հուլիսի 10-ին Փարիզում Հայաստանի կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը հանդիպեց ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր տնօրենի՝ մշակույթի հարցերով տեղակալ Նայեֆ Ռ. Ալ-Ֆայեզի հետ: Քննարկումները վերաբերում էին ՅՈՒՆԵՍԿՕ-ի հետ Հայաստանի համագործակցությանը, ինչպես նաև մշակութային ժառանգության պահպանմանն ու հանրահռչակմանն ուղղված նոր ծրագրերին:

Հանդիպման ընթացքում Ալ-Ֆայեզը շնորհավորեց Հայաստանին ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության կոմիտեի անդամ ընտրվելու կա-

Fot. MoESCS Armenia

z zastępcą dyrektora generalnego UNESCO ds. kultury Nayefem H. Al-Fayezem. Rozmowy dotyczyły współpracy Armenii z UNESCO oraz nowych projektów związanych z ochroną i promocją dziedzictwa kulturowego.

Podczas spotkania Al-Fayez pogratulował Armenii wyboru do Komitetu Światowego Dziedzictwa UNESCO, wskazując na rosnącą aktywność kraju w międzynarodowej współpracy kulturalnej.

Jednym z głównych tematów była współpraca UNESCO z Matenadaranem. Minister Andreasjan przedstawiła działalność naukową, edukacyjną i kulturalną Instytutu Dawnych Rękopisów im. Mesropa Masztoca. Rozmawiano o możliwości rozwijania Matenadaranu jako regionalnego i międzynarodowego ośrodka kształcenia specjalistów zajmujących się konserwacją i restauracją rękopisów.

Omówiono również wydarzenia związane z armeńskimi rocznicami wpisanymi do kalendarza UNESCO na lata 2026–2027. Znalazły się w nim 150. rocznica urodzin wybitnego językoznawcy Hraczji Adżariana oraz 100. rocznica rozpoczęcia budowy Placu Republiki w Erywaniu. Z tej okazji planowane są także wydarzenia w siedzibie UNESCO.

Rozmowy dotyczyły ponadto udziału Armenii w pracach Komitetu Światowego Dziedzictwa oraz współpracy w ramach Konwencji UNESCO w sprawie ochrony niematerialnego dziedzictwa kulturowego. Poruszono także przygotowania do X Międzynarodowych Igrzysk Kultury i Sportu Frankofonii, których gospodarzem w 2027 roku będzie Armenia.

W spotkaniu uczestniczyli również wiceminister Arthur Martirosjan oraz stały przedstawiciel Armenii przy UNESCO Aram Hakobian.

Nowa misja Unii Europejskiej w Armenii

■ Unia Europejska uruchomiła 13 lipca w Armenii nową cywilną misję partnerską EUPM Armenia, której zadaniem jest wspieranie armeńskich instytucji w przeciwdziałaniu zagrożeniom hybrydowym i wzmacnianiu odporności państwa.

Misja została formalnie ustanowiona 21 kwietnia 2026 roku na wniosek rządu Armenii. Jej eksperci będą wspierać armeńskie instytucje m.in. w przeciwdziałaniu cyberzagrożeniom, zagranicznej manipulacji informacyjnej i ingerencji oraz nielegalnym przepływom finanso-

պակցությամբ՝ մատնանշելով միջազգային մշակութային համագործակցության ոլորտում երկրի աճող ակտիվությունը:

Հիմնական թեմաներից մեկը ՅՈՒՆԵՍԿՕ-ի և Մատենադարանի համագործակցությունն էր: Նախարար Անդրեասյանը ներկայացրեց Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի գիտական, կրթական և մշակութային գործունեությունը: Քննարկվեց Մատենադարանը որպես ձեռագրերի պահպանմամբ և վերականգնմամբ զբաղվող մասնագետների պատրաստման տարածաշրջանային և միջազգային կենտրոն զարգացնելու հնարավորությունը:

Քննարկվեցին նաև 2026-2027 թվականների ՅՈՒՆԵՍԿՕ-ի օրացույցում ընդգրկված հայկական հոբելյաններին նվիրված միջոցառումները: Դրանց թվում են նշանավոր լեզվաբան Հրաչյա Աճառյանի ծննդյան 150-ամյակը և Երևանի Հանրապետության հրապարակի կառուցման մեկնարկի 100-ամյակը: Այս առիթներով միջոցառումներ են նախատեսվում նաև ՅՈՒՆԵՍԿՕ-ի կենտրոնակայանում:

Բանակցությունները վերաբերում էին նաև Համաշխարհային ժառանգության կոմիտեի աշխատանքներին Հայաստանի մասնակցությանը և ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանության մասին ՅՈՒՆԵՍԿՕ-ի կոնվենցիայի շրջանակում համագործակցությանը: Անդրադարձ կատարվեց նաև Ֆրանկոֆոնիայի մշակութային և մարզական X միջազգային խաղերի նախապատրաստական աշխատանքներին, որոնք 2027 թվականին հյուրընկալելու է Հայաստանը:

Հանդիպմանը մասնակցեցին նաև փոխնախարար Արթուր Մարտիրոսյանը և ՅՈՒՆԵՍԿՕ-ում Հայաստանի մշտական ներկայացուցիչ Արամ Հակոբյանը:

Եվրոպական միության նոր առաքելությունը Հայաստանում

■ 2026 թվականի հուլիսի 13-ին Եվրոպական միությունը Հայաստանում գործարկեց EUPM Armenia նոր քաղաքացիական գործընկերային առաքելությունը, որի նպատակն է աջակցել Հայաստանի պետական կառույցներին հիբրիդային սպառնալիքներին հակազդելու և պետության դիմակայունությունն ամրապնդելու գործում:

Առաքելությունը պաշտոնապես ստեղծվել է 2026 թվականի ապրիլի 21-ին՝ Հայաստանի կառավարության խնդրանքով: Դրա փորձագետները կաջակցեն Հայաստանի պետական կառույցներին, ի թիվս այլ ոլորտների, կիբեռսպառնալիքներին, օտարերկրյա տեղեկատվական մանիպուլյացիաներին և միջամտությանը, ինչպես նաև անօրինական ֆինանսական հոսքերին հակազդելու գործում: Աջակցությունը կներառի ռազմավարական խորհրդատվություն, մասնագիտական փորձի տրամադրում և ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում:

EUPM Armenia-ն խորհրդատվական բնույթ ունի և չի մասնակցելու Հայաստանի իշխանությունների կողմից որոշումների ընդունմանը: Առաքելության առաջին մանդատը նախատեսված է երկու տարվա համար, իսկ անձնակազմը հիմնականում կազմված

Fot. MFA Armenia

wym. Pomoc obejmie doradztwo strategiczne, wiedzę specjalistyczną i rozwijanie zdolności instytucjonalnych.

EUPM Armenia ma charakter doradczy i nie będzie uczestniczyć w podejmowaniu decyzji przez władze Armenii. Jej pierwszy mandat przewidziano na dwa lata, a personel będą stanowili przede wszystkim eksperci delegowani przez państwa członkowskie Unii Europejskiej. Szefem misji został Cosmin George Dinescu, który wcześniej kierował unijną misją partnerską w Mołdawii.

Utworzenie misji jest kolejnym elementem zacieśniającej się współpracy Armenii z Unią Europejską w dziedzinie bezpieczeństwa. W grudniu 2025 roku Rada Partnerstwa UE–Armenia przyjęła nową Agendę Strategiczną, w której jednym z priorytetów jest współpraca w przeciwdziałaniu zagrożeniom hybrydowym i zagranicznej ingerencji informacyjnej.

EUPM Armenia jest drugą cywilną misją Unii Europejskiej działającą w Armenii. Funkcjonująca od 2023 roku EUMA prowadzi obserwację sytuacji w terenie oraz działania służące budowaniu zaufania i bezpieczeństwu ludności. Nowa misja ma inne zadanie i będzie koncentrować się na wzmacnianiu zdolności armeńskich instytucji do zapobiegania zagrożeniom hybrydowym, ich wykrywania i reagowania na nie.

O obecności mniejszości ormiańskiej w mediach publicznych

■ W siedzibie TVP3 Katowice 14 lipca odbyło się spotkanie Hraczji Bojadżjana, przedstawiciela mniejszości ormiańskiej w Komisji Wspólnej Rządu i Mniejszości Narodowych i Etnicznych, z p.o. dyrektorem i redaktorem naczelnym stacji Rafałem Kurowskim oraz przedstawicielami kierownictwa ośrodka.

Jednym z głównych tematów rozmowy była obecność mniejszości ormiańskiej w mediach publicznych. Zwrócono uwagę na brak cyklicznego pasma poświęconego Ormianom w Polsce oraz potrzebę szerszego prezentowania ich historii, kultury i współczesnej działalności. Rozmawiano również o możliwościach współpracy i realizacji materiałów dotyczących mniejszości ormiańskiej.

Podczas spotkania poinformowano także o objęciu

Fot. euneighbourseast.eu

կլինի Եվրոպական Միության անդամ պետությունների կողմից գործուղված փորձագետներից: Առաքելության ղեկավար է նշանակվել Կոսմին Ջորջե Դինեսկուն, որը նախկինում ղեկավարել է Մոլդովայում Եվրոպական միության գործընկերային առաքելությունը:

Առաքելության ստեղծումը անվտանգության ոլորտում Հայաստանի և Եվրոպական Միության միջև խորացող համագործակցության հերթական բաղադրիչն է: 2025 թվականի դեկտեմբերին ԵՄ-Հայաստան գործընկերության խորհուրդն ընդունեց նոր Ռազմավարական օրակարգ, որի առաջնահերթություններից մեկը հիբրիդային սպառնալիքներին և օտարերկրյա տեղեկատվական միջամտությանը հակազդելու ոլորտում համագործակցությունն է:

EUPM Armenia-ն Հայաստանում գործող Եվրոպական Միության երկրորդ քաղաքացիական առաքելությունն է: 2023 թվականից գործող EUMA-ն իրականացնում է իրավիճակի դիտարկում տեղում, ինչպես նաև վստահության ամրապնդմանն ու բնակչության անվտանգությանն ուղղված աշխատանքներ: Նոր առաքելությունն ունի այլ նպատակ և ուղղված է Հայաստանի պետական կառույցների՝ հիբրիդային սպառնալիքները կանխելու, հայտնաբերելու և դրանց արդյունավետ արձագանքելու կարողությունների ամրապնդմանը:

Fot. Instytut Ormiański

przez TVP3 Katowice patronatem medialnym V Festiwalu Kultury Ormiańskiej. Współpraca ze stacją ma służyć promocji wydarzeń festiwalowych oraz przybliżaniu widzom kultury ormiańskiej.

W spotkaniu uczestniczyli również Aneta Łuczak, kierownik Regionalnej Agencji Producenckiej, Agnieszka Giletiuk, kierownik Biura Reklamy i Marketingu, oraz Joanna Frydrych, sekretarz programu.

Mniejszość ormiańska i współpraca parlamentarna

■ W Sejmie odbyło się 15 lipca spotkanie poświęcone sprawom mniejszości ormiańskiej oraz współpracy polsko-ormiańskiej. W rozmowach uczestniczyli członkowie Polsko-Armeńskiej Grupy Parlamentarnej, Hraczja Bojadżjan, przedstawiciel mniejszości ormiańskiej w Komisji Wspólnej Rządu i Mniejszości Narodowych i Etnicznych, Dorota Zielińska-Kozarów, kierownik nowo utworzonego Sekretariatu Strony Mniejszościowej, oraz Ksenia Alhaug, dyrektor Departamentu Wyznań Religijnych oraz Mniejszości Narodowych i Etnicznych MSWiA.

Spotkanie poprzedziła wizyta Hraczji Bojadżjana w nowo utworzonym Sekretariacie w Kancelarii Sejmu. Wspólnie z przewodniczącym Polsko-Armeńskiej Grupy Parlamentarnej, posłem Lucjanem Pietrzczykiem, złożył on Dorocie Zielińskiej-Kozarów gratulacje z okazji objęcia funkcji kierownika.

Podczas rozmów omówiono zasady działania Sekretariatu oraz jego rolę jako zaplecza Strony Mniejszościowej Komisji Wspólnej. Poruszono także kwestie bieżącej współpracy administracji państwowej z mniejszościami narodowymi i etnicznymi.

Ważnym tematem była przygotowywana w ramach V Festiwalu Kultury Ormiańskiej wystawa „Ormianie w dziejach parlamentaryzmu polskiego", poświęcona udziałowi Ormian w historii polskiego parlamentaryzmu. Rozmawiano o jej prezentacji w Sejmie RP, a w dalszej kolejności również w parlamencie Armenii. Członkowie Polsko-Armeńskiej Grupy Parlamentarnej zadeklarowali współpracę przy realizacji tej inicjatywy.

Rozmowy dotyczyły również roli mniejszości ormiańskiej w rozwijaniu kontaktów pomiędzy Polską a Armenią. Polska jest ojczyzną polskich Ormian, natomiast Armenia jest ojczyzną Ormian polskich. Podkreślono znaczenie wzajemnego poznawania się i budowania relacji.

Հանրային լրատվամիջոցներում հայկական փոքրամասնության ներկայության մասին

■ 2026 թվականի հուլիսի 14-ին TVP3 Katowice-ի կենտրոնակայանում տեղի ունեցավ Կառավարության և ազգային ու էթնիկ փոքրամասնությունների համատեղ հանձնաժողովում հայկական փոքրամասնության ներկայացուցիչ Հրաչյա Բոյաջյանի հանդիպումը հեռուստակայանի տնօրենի և գլխավոր խմբագրի պաշտոնակատար Ռաֆալ Կուրովսկու, ինչպես նաև կենտրոնի ղեկավարության ներկայացուցիչների հետ:

Զրույցի հիմնական թեմաներից մեկը հանրային լրատվամիջոցներում հայկական փոքրամասնության ներկայությունն էր: Ուշադրություն հրավիրվեց Լեհաստանի հայերին նվիրված պարբերական հաղորդաշարի բացակայության, ինչպես նաև նրանց պատմությունը, մշակույթը և ժամանակակից գործունեությունն ավելի լայնորեն ներկայացնելու անհրաժեշտության վրա: Քննարկվեցին նաև համագործակցության և հայկական փոքրամասնությանը վերաբերող նյութերի պատրաստման հնարավորությունները:

Հանդիպման ընթացքում տեղեկացվեց նաև, որ TVP3 Katowice-ն ստանձնել է Հայկական մշակույթի V փառատոնի մեդիա հովանավորությունը: Հեռուստակայանի հետ համագործակցությունը պետք է նպաստի փառատոնային միջոցառումների հանրահռչակմանը և հեռուստադիտողներին հայկական մշակույթին առավել մոտիկից ծանոթացնելուն:

Հանդիպմանը մասնակցեցին նաև Տարածաշրջանային պրոդյուսերական գործակալության ղեկավար Անետա Լուչակը, Գովազդի և մարքեթինգի գրասենյակի ղեկավար Ագնեշկա Գիլետյուկը և ծրագրի քարտուղար Յոաննա Ֆրիդրիխը:

Հայկական փոքրամասնությունը և խորհրդարանական համագործակցությունը

■ 2026 թվականի հուլիսի 15-ին Սեյմում տեղի ունեցավ հանդիպում՝ նվիրված հայկական փոքրամասնության հարցերին և Լեհ-հայկական համագործակցությանը: Քննարկումներին մասնակցեցին Լեհաստան-Հայաստան խորհրդարանական խմբի անդամները, Կառավարության և ազգային ու էթնիկ փոքրամասնությունների համատեղ հանձնաժողովում հայկական փոքրամասնության ներկայացուցիչ Հրաչյա Բոյաջյանը, նորաստեղծ Փոքրամասնությունների կողմի քարտուղարության ղեկավար Դորոտա Զելինսկա-Կոզարուվը, ինչպես նաև Լեհաստանի ներքին գործերի և վարչակազմի նախարարության Կրոնական դավանանքների և ազգային ու էթնիկ փոքրամասնությունների վարչության տնօրեն Քսենիա Ալհաուգը:

Հանդիպմանը նախորդեց Հրաչյա Բոյաջյանի այցը Սեյմի գրասենյակում նորաստեղծ Քարտուղարություն: Լեհաստան-Հայաստան խորհրդարանական խմբի նախագահ, պատգամավոր Լուցյան Պետրչիկի հետ միասին նա շնորհավորեց Դորոտա Զելինսկա-

Fot. Instytut Ormiański

nia pozostaje ich ojczyzną historyczną. Obecność przedstawiciela mniejszości w dialogu z Polsko-Armeńską Grupą Parlamentarną pozwala łączyć sprawy Ormian żyjących w Polsce z inicjatywami służącymi współpracy obu państw.

Uczestnicy spotkania podkreślili potrzebę kontynuowania regularnego dialogu i organizowania podobnych spotkań dwa razy w roku.

Polska na III Międzynarodowym Kongresie Armenologicznym w Erywaniu

■ W dniach 22–24 lipca w Instytucie Starożytnych Rękopisów im. św. Mesropa Masztoca – Matenadaranie w Erywaniu odbył się III Międzynarodowy Kongres Armenologiczny. Tegoroczne spotkanie, zorganizowane przy wsparciu Ministerstwa Edukacji, Nauki, Kultury i Sportu Republiki Armenii, poświęcono 350. rocznicy urodzin Mechitara z Sebasty. W kongresie uczestniczyli naukowcy i specjaliści reprezentujący uczelnie oraz instytucje naukowe z 16 państw.

Polskę reprezentowali prof. Krzysztof Stopka, kierownik Pracowni Dziejów Ormian Polskich im. Sadoka Barącza Uniwersytetu Jagiellońskiego, dr Tomasz Krzyżowski oraz Hraczja Bojadżjan, prezes Instytutu Ormiańskiego i przewodniczący rad ośrodków armenistycznych Uniwersytetu Jagiellońskiego oraz Uniwersytetu im. Adama Mickiewicza w Poznaniu.

Polscy uczestnicy wzięli również udział w programie naukowym kongresu. Prof. Krzysztof Stopka przedstawił referat dotyczący nowo opublikowanych materiałów do dziejów Ormian w Polsce i ich znaczenia dla dalszych badań. Dr Tomasz Krzyżowski zaprezentował koncepcję słownika biograficznego duchowieństwa ormiańskiego w Polsce od XIV do XXI wieku. Hraczja Bojadżjan przedstawił działalność oraz plany rozwoju nowych ośrodków armenistycznych w Polsce: Centrum Studiów Armenistycznych im. Mechitara Gosza na Uniwersytecie im. Adama Mickiewicza w Poznaniu oraz Pracowni Dziejów Ormian Polskich im. Sadoka Barącza na Uniwersytecie Jagiellońskim.

Jednym z najważniejszych rezultatów pobytu polskiej delegacji było podpisanie memorandum o współpracy

Fot. Instytut Ormiański

Կոզարուվին ղեկավարի պաշտոնը ստանձնելու կապակցությամբ:

Քննարկումների ընթացքում ներկայացվեցին Քարտուղարության գործունեության սկզբունքները և դերը՝ որպես Համատեղ հանձնաժողովի Փոքրամասնությունների աշխատանքներն ապահովող կառույց: Անդրադարձ կատարվեց նաև պետական կառավարման մարմինների և ազգային ու էթնիկ փոքրամասնությունների միջև ընթացիկ համագործակցության հարցերին:

Կարևոր թեմաներից էր Հայկական մշակույթի V փառատոնի շրջանակում նախապատրաստվող «Հայերը լեհական պառլամենտարիզմի պատմության մեջ» ցուցահանդեսը՝ նվիրված լեհական պառլամենտարիզմի պատմության մեջ հայերի մասնակցությանը: Քննարկվեց ցուցահանդեսը Լեհաստանի Հանրապետության Սեյմում, իսկ հետագայում նաև Հայաստանի խորհրդարանում ներկայացնելու հարցը: Լեհաստան-Հայաստան խորհրդարանական խմբի անդամները պատրաստակամություն հայտնեցին համագործակցելու այս նախաձեռնության իրականացման գործում:

Քննարկումները վերաբերում էին նաև Լեհաստանի և Հայաստանի միջև կապերի զարգացման գործում հայկական փոքրամասնության դերին: Լեհաստանը լեհահայերի հայրենիքն է, մինչդեռ Հայաստանը շարունակում է մնալ նրանց պատմական հայրենիքը:

Fot. Matenadaran

Fot. Matenadaran

Fot. Matenadaran

Լեհաստան-Հայաստան խորհրդարանական խմբի հետ երկխոսությանը փոքրամասնության ներկայացուցչի մասնակցությունը հնարավորություն է տալիս Լեհաստանում ապրող հայերի հարցերը կապել երկու պետությունների համագործակցությանն ուղղված նախաձեռնությունների հետ:

Հանդիպման մասնակիցներն ընդգծեցին կանոնավոր երկխոսությունը շարունակելու և նման հանդիպումները տարեկան երկու անգամ կազմակերպելու անհրաժեշտությունը:

Լեհաստանը՝ Երևանում կայացած Հայագիտական III միջազգային կոնգրեսում

■ 2026 թվականի հուլիսի 22-24-ը Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտում՝ Մատենադարանում տեղի ունեցավ Հայագիտական III միջազգային կոնգրեսը: Այս տարվա հանդիպումը, որը կազմակերպվել էր Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աջակցությամբ, նվիրված էր Մխիթար Սեբաստացու ծննդյան 350-ամյակին: Կոնգրեսին մասնակցեցին 16 պետությունների համալսարաններն ու գիտական հաստատությունները ներկայացնող գիտնականներ և մասնագետներ:

Լեհաստանը ներկայացնում էին Յագելոնյան համալսարանի Սադոկ Բարոնչի անվան Լեհահայերի պատմության ուսումնասիրության կենտրոնի ղեկավար պրոֆ. Քշիշտոֆ Ստոպկան, դոկտոր Թոմաշ Քշիժովսկին և Հայկական ինստիտուտի նախագահ, Յագելոնյան համալսարանի և Պոզնանի Ադամ Միցկևիչի անվան համալսարանի հայագիտական կենտրոնների խորհուրդների նախագահ Հրաչյա Բոյաջյանը:

Լեհ պատվիրակները մասնակցեցին նաև կոնգրեսի

pomiędzy Matenadaranem a Instytutem Ormiańskim. Dokument podpisali dyrektor Matenadaranu Ara Chzmalian oraz prezes Instytutu Ormiańskiego Hraczja Bojadżjan. Porozumienie formalizuje dotychczasowe kontakty i otwiera możliwość realizacji wspólnych przedsięwzięć naukowych, wydawniczych, muzealnych i wystawienniczych.

Współpraca polskich armenistów z Matenadaranem ma już wieloletnią historię. W zbiorach instytutu znajduje się około 130 rękopisów związanych z Ormianami dawnej Rzeczypospolitej, pochodzących z XIV–XVIII wieku. W 2017 roku Matenadaran przygotował wystawę „Polish Armenians: Manuscript Writing Traditions", a prof. Krzysztof Stopka został wówczas uhonorowany Medalem im. Mesropa Masztoca za działalność naukową i współpracę z Matenadaranem.

Kontakty te były rozwijane również w ostatnich miesiącach. W grudniu 2025 roku przedstawiciele Matenadaranu odwiedzili Uniwersytet Jagielloński. W rozmowach, w których uczestniczyli m.in. Hraczja Bojadżjan, prof. Krzysztof Stopka i dr Tomasz Krzyżowski, omawiano możliwość realizacji wspólnych projektów służących badaniu i popularyzacji dziedzictwa Ormian polskich.
Kolejnym przykładem współpracy była armeńska premiera filmu dokumentalnego „Zaginiony, odnaleziony, ukryty", poświęconego Ewangeliarzowi ze Skewry. Pokaz odbył się 5 marca 2026 roku w Matenadaranie. Film przedstawia historię jednego z najcenniejszych zabytków ormiańskiego rękopiśmiennictwa XII wieku, jego drogę z Cylicji do Polski, zaginięcie podczas II wojny światowej i późniejsze odnalezienie. Produkcja powstała w ramach polsko-ormiańskiej współpracy kulturalnej.

Jednym z pierwszych konkretnych rezultatów memorandum podpisanego w lipcu ma być przekazanie do Polski około 1800 woluminów specjalistycznej literatury armenistycznej. Książki mają zasilić m.in. zbiory Centrum Studiów Armenistycznych im. Mechitara Gosza oraz Pracowni Dziejów Ormian Polskich im. Sadoka Barącza, tworząc zaplecze dla studentów i badaczy zajmujących się Armenią oraz historią Ormian w Polsce.

Podczas pobytu w Erywaniu prof. Krzysztof Stopka, dr Tomasz Krzyżowski i Hraczja Bojadżjan spotkali się również z prof. Lilit Mkrtczian, rektor Ormiańskiego Państwowego Uniwersytetu Pedagogicznego im. Chaczatura Abowiana. Rozmowy dotyczyły wspólnych projektów badawczych, wymiany studentów i kadry akademickiej oraz udziału naukowców z Armenii w rozwijaniu studiów armenistycznych w Polsce. Poruszono także możliwość nawiązania oficjalnej współpracy uczelni z Uniwersytetem Jagiellońskim oraz Uniwersytetem im. Adama Mickiewicza w Poznaniu. Hraczja Bojadżjan zaprosił rektor Lilit Mkrtczian do Polski, aby kontynuować rozmowy rozpoczęte w Erywaniu.

Konsul Honorowy Armenii w Polsce Honorowym Obywatelem Jechegnadzoru

■ W dniu 29 lipca Hraczja Bojadżjan otrzymał tytuł Honorowego Obywatela Miasta Jechegnadzor. Wyróżnienie zostało przyznane decyzją Rady Miasta.

Uroczystość odbyła się w Wojewódzkiej Bibliotece Regionu Wajoc Dzor. Wzięli w niej udział przedstawiciele władz miasta, na czele z burmistrzem Dawidem Harugիտական ծրագրին: Պրոֆ. Քշիշտոֆ Ստոպկան հանդես եկավ զեկույցով, որը նվիրված էր Լեհաստանում հայերի պատմությանը վերաբերող նոր հրատարակված նյութերին և հետագա ուսումնասիրությունների համար դրանց նշանակությանը: Դոկտոր Թոմաշ Քշիժովսկին ներկայացրեց XIV-XXI դարերի Լեհաստանի հայ հոգևորականության կենսագրական բառարանի հայեցակարգը: Հրաչյա Բոյաջյանը ներկայացրեց Լեհաստանի նոր հայագիտական կենտրոնների գործունեությունն ու զարգացման ծրագրերը՝ Պոզնանի Ադամ Միցկևիչի անվան համալսարանի Մխիթար Գոշի անվան հայագիտական ուսումնասիրությունների կենտրոնը և Յագելոնյան համալսարանի Սադոկ Բարոնչի անվան Լեհահայերի պատմության ուսումնասիրության կենտրոնը:

Լեհական պատվիրակության այցի կարևորագույն արդյունքներից մեկը Մատենադարանի և Հայկական ինստիտուտի միջև համագործակցության հուշագրի ստորագրումն էր: Փաստաթուղթը ստորագրեցին Մատենադարանի տնօրեն Արա Խզմալյանը և Հայկական ինստիտուտի նախագահ Հրաչյա Բոյաջյանը: Համաձայնագիրը պաշտոնականացնում է մինչ այժմ ձևավորված կապերը և հնարավորություն է ստեղծում համատեղ գիտական, հրատարակչական, թանգարանային և ցուցահանդեսային նախաձեռնությունների իրականացման համար:

Լեհ հայագետների և Մատենադարանի համագործակցությունն արդեն բազմամյա պատմություն ունի: Ինստիտուտի հավաքածուներում պահպանվում է պատմական Ռեչ Պոսպոլիտայի հայերի հետ կապված XIV–XVIII դարերի շուրջ 130 ձեռագիր: 2017 թվականին Մատենադարանը կազմակերպեց «Polish Armenians: Manuscript Writing Traditions» («Լեհահայեր. գրչության ավանդույթները») ցուցահանդեսը, իսկ պրոֆ. Քշիշտոֆ Ստոպկան այն ժամանակ գիտական գործունեության և Մատենադարանի հետ համագործակցության համար պարգևատրվեց Մեսրոպ Մաշտոցի անվան մեդալով:

Այս կապերը զարգացել են նաև վերջին ամիսներին: 2025 թվականի դեկտեմբերին Մատենադարանի ներկայացուցիչներն այցելեցին Յագելոնյան համալսարան: Քննարկումների ընթացքում, որոնց մասնակցեցին, ի թիվս այլոց, Հրաչյա Բոյաջյանը, պրոֆ. Քշիշտոֆ Ստոպկան և դոկտոր Թոմաշ Քշիժովսկին, քննարկվեց լեհահայերի ժառանգության ուսումնասիրությանն ու հանրահռչակմանն ուղղված համատեղ ծրագրերի իրականացման հնարավորությունը:

Համագործակցության մեկ այլ օրինակ էր Սկևռայի Ավետարանին նվիրված «Կորած, գտնված, թաքցված» վավերագրական ֆիլմի հայկական պրեմիերան: Ցուցադրությունը տեղի ունեցավ 2026 թվականի մարտի 5-ին Մատենադարանում: Ֆիլմը ներկայացնում է XII դարի հայկական ձեռագրական արվեստի ամենաարժեքավոր հուշարձաններից մեկի պատմությունը, Կիլիկիայից Լեհաստան հասնելու ճանապարհը, Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ դրա անհետացումը և հետագայում հայտնաբերումը: Ֆիլմը ստեղծվել է լեհ-հայկական մշակութային համագործակցության շրջանակում:

tiunjanem i wiceburmistrzem Wardanem Awagjanem. Obecny był również Marek Kuberski, zastępca szefa Misji Obserwacyjnej Unii Europejskiej w Armenii (EUMA).

Uroczystości towarzyszyły występy uczniów Szkoły Muzycznej w Jechegnadzorze. Bojadżjan spotkał się także z dziećmi, które wcześniej uczestniczyły w wymianie młodzieży i gościły w Ciechanowcu. Młodzi mieszkańcy Jechegnadzoru opowiadali o pobycie w Polsce, nawiązanych przyjaźniach i spotkaniach z polskimi rówieśnikami.

Przyznane wyróżnienie ma dla Hraczji Bojadżjana szczególny, osobisty wymiar. Jechegnadzor jest jego rodzinnym miastem, a w ostatnich latach stał się również jednym z ważnych miejsc rozwijającej się współpracy samorządowej i kulturalnej między Polską a Armenią.

Fot. Hraczja Bojadżjan

Fot. Hraczja Bojadżjan

Fot. Hraczja Bojadżjan

Հուլիսին ստորագրված հուշագրի առաջին շոշափելի արդյունքներից մեկը պետք է լինի շուրջ 1800 հատոր հայագիտական գրականության փոխանցումը Լեհաստան: Գրքերը պետք է համալրեն Մխիթար Գոշի անվան հայագիտական ուսումնասիրությունների կենտրոնի և Սադոկ Բարոնչի անվան Լեհահայերի պատմության ուսումնասիրության կենտրոնի հավաքածուները՝ ստեղծելով անհրաժեշտ գիտական հենք Հայաստանի և Լեհաստանում հայերի պատմության ուսումնասիրությամբ զբաղվող ուսանողների և հետազոտողների համար:

Երևանում գտնվելու ընթացքում պրոֆ. Քշիշտոֆ Ստոպական, դոկտոր Թոմաշ Քշիժովսկին և Հրաչյա Բոյաջյանը հանդիպեցին նաև Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ռեկտոր պրոֆ. Լիլիթ Մկրտչյանին: Քննարկումները վերաբերում էին համատեղ հետազոտական ծրագրերին, ուսանողների և ակադեմիական անձնակազմի փոխանակմանը, ինչպես նաև Լեհաստանում հայագիտական ուսումնասիրությունների զարգացման գործում Հայաստանի գիտնականների մասնակցությանը: Քննարկվեց նաև համալսարանի՝ Յագելոնյան համալսարանի և Պոզնանի Ադամ Միցկևիչի անվան համալսարանի հետ պաշտոնական համագործակցություն հաստատելու հնարավորությունը: Հրաչյա Բոյաջյանը ռեկտոր Լիլիթ Մկրտչյանին հրավիրեց Լեհաստան՝ Երևանում սկսված քննարկումները շարունակելու նպատակով:

Լեհաստանում Հայաստանի պատվավոր հյուպատոսը՝ Եղեգնաձորի պատվավոր քաղաքացի

■ 2026 թվականի հուլիսի 29-ին Եղեգնաձորում Հրաչյա Բոյաջյանին շնորհվեց Եղեգնաձոր քաղաքի պատվավոր քաղաքացու կոչում: Պարգևը շնորհվել է քաղաքի ավագանու որոշմամբ:

Արարողությունը տեղի ունեցավ Վայոց ձորի մարզային գրադարանում: Դրան մասնակցեցին քաղաքի իշխանությունների ներկայացուցիչները՝ Եղեգնաձորի համայնքապետ Դավիթ Հարությունյանի և համայնքապետի տեղակալ Վարդան Ավագյանի գլխավորությամբ: Ներկա էր նաև Հայաստանում Եվրոպական Միության դիտորդական առաքելության (EUMA) ղեկավարի տեղակալ Մարեկ Կուբերսկին:

Արարողությունն ուղեկցվեց Եղեգնաձորի երաժշտական դպրոցի սաների ելույթներով: Բոյաջյանը հանդիպեց նաև այն երեխաների հետ, որոնք ավելի վաղ մասնակցել էին երիտասարդական փոխանակման ծրագրին և հյուրընկալվել Ցեխանովեցում: Եղեգնաձորի երիտասարդ բնակիչները պատմեցին Լեհաստանում անցկացրած ժամանակի, ձևավորված ընկերությունների և լեհ հասակակիցների հետ հանդիպումների մասին:

Շնորհված կոչումը Հրաչյա Բոյաջյանի համար առանձնահատուկ անձնական նշանակություն ունի: Եղեգնաձորը նրա ծննդավայրն է, իսկ վերջին տարիներին դարձել է նաև Լեհաստանի և Հայաստանի միջև զարգացող տեղական ինքնակառավարման և մշակութային համագործակցության կարևոր կենտրոններից մեկը:

ARTYKUŁY NAUKOWE, KULTURALNE
ԳԻՏԱՄԾԱԿՈՒԹԱՅԻՆ ՀՈԴՎԱԾՆԵՐ

ANDRZEJ A. ZIĘBA

OD STATUSU GOŚCI DO WSPÓŁGOSPODARZY: ORMIANIE W POLITYCE POLSKIEJ

ԱՆՋԵՅ ԺԵՄԲԱ

ՀՅՈՒՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻՑ ՄԻՆՉԵՎ ՀԱՄԱԿԵՑՈՒԹՅՈՒՆ. ՀԱՅԵՐԸ ԼԵՀԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ



INSTYTUT ORMIAŃSKI
ՀԱՅԿԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Przywilej króla Kazimierza III Wielkiego z 4 lutego 1367 roku, udzielony ormiańskiemu biskupowi Grzegorzowi, oficjalnie zezwalał na działalność Apostolskiego Kościoła Ormiańskiego we Lwowie, zapewniając swobodne wyznawanie wiary ormiańskiej i ustanowienie siedziby biskupiej. Dokument ten, o wyjątkowej wartości historycznej i opatrzony pieczęcią królewską, stanowi świadectwo niemal 660-letniej obecności społeczności ormiańskiej w Polsce. W 2021 roku przywilej został wpisany na Polską Listę Krajową Programu UNESCO „Pamięć Świata". Oryginał dokumentu przechowywany jest w Archiwum Głównym Akt Dawnych (AGAD) w Warszawie.

Լեհաստանի թագավոր Կազիմիր III Մեծի 1367 թվականի փետրվարի 4-ի արտոնագիրը պաշտոնապես թույլատրում էր Հայ եպիսկոպոս Գրիգորին նստավայր հիմնադրել Լվով քաղաքում և դավանել այնտեղ հայկական հավատք: Բացառիկ պատմական արժեք ունեցող և թագավորական կնիքով հաստատված այս փաստաթուղթը Լեհաստանում հայ համայնքի ջուրջ 660-ամյա ներկայության վկայությունն է, որը 2021թվականին ընդգրկվել է UNESCO-ի «Աշխարհի հիշողություն» ծրագրի Լեհաստանի ազգային ցանկում: Բնագիրը պահվում է Վարշավայի Հին ակտերի գլխավոր արխիվում:

Polityka to termin szeroki, bo na dobrą sprawę jest nią niemal wszystko w życiu publicznym: ideologie, ruchy społeczne, organizacje polityczne, władza ustawodawcza, wykonawcza, sądownicza i ta czwarta, to jest media, a także religia, wojsko, samorząd lokalny i dyplomacja. Tu zajmę się naszkicowaniem tylko wybranych wątków, zwłaszcza władzą, jako jądrem tych procesów, które politykę stanowią. Na początek jednak trzeba postawić kilka pytań o kontekst zjawiska, o którym mowa.

Po pierwsze, czy sam proces migracji Ormian do Polski stwarzał problem polityczny, podobnie jak dziś dzieje się to z exodusem z Azji i Afryki do Europy? Odpowiedź jest prosta – nie. Nie tylko dlatego, że nie był to proces masowy. Przede wszystkim ponieważ państwo i jego elity polityczne chciały go, kreowały i kontrolowały od samego początku, prowadząc politykę migracyjną o charakterze utylitarnym i pragmatycznym, pozbawionym elementów ideologicznej utopii, obliczoną jednocześnie na dobro przyjmujących i przybywających.

Po drugie, czy obecność Ormian w Polsce generowała w konsekwencji jakiś problem w polityce wewnętrznej, czy doprowadziła do walki o przestrzeń, byt, władzę między przybyszami a autochtonami? Tu odpowiedź brzmi – tak, ale tylko lokalnie, na dobrą sprawę tylko we Lwowie, gdzie doszło do konfliktu z zamożnym mieszczaństwem polskim, i w Gdańsku, gdzie miejscowi Niemcy w obawie o konkurencję ekonomiczną zablokowali osadnictwo ormiańskie. W zasadzie jednak nie widzimy w przypadku Ormian problemów, jakie stworzyła średniowieczna migracja niemiecka, która chciała dokonać wymiany elit politycznych i kościelnych Królestwa Polskiego, lub wielowiekowe migracje żydowskie, które wykreowały ogólnokrajowy i ogólnospołeczny konflikt etniczny.

To zagadnienie prowadzi nas do kolejnego pytania: czy wspólnoty ormiańskie w Polsce stanowiły lub stworzyły zagrożenie dla polityki zewnętrznej, to jest w relacjach Polski z innymi państwami? Tu znów porównajmy ich sytuację z innymi migrantami, o podobnej liczebności, takimi jak Tatarzy, najpierw komplikujący relacje z chanatami nadczarnomorskimi, a w dobie wojen Polski z Imperium Osmańskim okazali się nielojalni, albo Cyganie i Starowiercy, których obecność w Polsce wywołała niezadowolenie i interwencje Cesarstwa Niemieckiego (w pierwszym przypadku) i Moskwy (w drugim).

Ormianie nie tylko nie stanowili takiego problemu, ale uważani byli za bardzo przydatnych w politycznych relacjach z Persją i Imperium Osmańskim, a epizodycznie przyczynili się nawet do powstania pomysłu na transkontynentalne rozszerzenie horyzontów polskiej polityki zagranicznej (plan odnowienia Królestwa Armenii króla Jana III Sobieskiego). Natomiast zagadnienie niepodległości Armenii w polskiej aktywności i myśli politycznej słabym echem zaczęło się odzywać od lat 80. XIX wieku, a nieco mocniej w dobie rozpadu Rosji po pierwszej wojnie światowej, jednak nie uzyskało wagi w dyplomacji odrodzonej Polski i nie zaznaczyło się silniej nawet w ruchu prometejskim lat

Քաղաքականությունը լայն հասկացություն է, քանի որ, ըստ էության, հասարակական կյանքի գրեթե բոլոր ոլորտները քաղաքականության հետ առնչվում են: Դրանք են գաղափարախոսությունները, հասարակական շարժումները, քաղաքական կազմակերպությունները, օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունները, ինչպես նաև այսպես կոչված չորրորդ իշխանությունը՝ մեդիան: Բացի այդ, քաղաքականության շրջանակում են նաև կրոնը, բանակը, տեղական ինքնակառավարումը և դիվանագիտությունը: Այստեղ ես կսահմանափակվեմ միայն ընտրված որոշ թեմաների ուրվագծմամբ, հատկապես իշխանությամբ՝ որպես այն գործընթացների միջուկ, որոնք կազմում են քաղաքականությունը: Սակայն նախ անհրաժեշտ է մի քանի հարց բարձրացնել այն երևույթի համատեքստի վերաբերյալ, որի մասին խոսվում է:

Նախ՝ արդյո՞ք հայերի միգրացիան դեպի Լեհաստան ստեղծում էր քաղաքական խնդիր, ինչպես այսօր տեղի է ունենում Ասիայից և Աֆրիկայից դեպի Եվրոպա արտագաղթի պարագայում: Պատասխանը պարզ է՝ ոչ: Ոչ միայն այն պատճառով, որ դա զանգվածային գործընթաց չէր, այլ նախ և առաջ այն պատճառով, որ պետությունն ու նրա քաղաքական էլիտաները ոչ միայն ցանկանում էին այդ գործընթացը, այլև այն ձևավորում և վերահսկում էին հենց սկզբից: Նրանք վարում էին օգտապաշտական և պրագմատիկ միգրացիոն քաղաքականություն, որը զերծ էր գաղափարական ուտոպիզմից և միաժամանակ հաշվարկված էր թե՛ ընդունող հասարակության, թե՛ ներգաղթողների բարօրության տեսանկյունից: Երկրորդ՝ արդյո՞ք հայերի ներկայությունը Լեհաստանում որևէ ներքաղաքական խնդիր առաջացրեց: Արդյո՞ք այն հանգեցրեց եկվորների և տեղաբնակների միջև պայքարի՝ տարածքի, կենսապահովման միջոցների կամ իշխանության համար: Այստեղ պատասխանը հետևյալն է՝ այո, բայց միայն տեղային մակարդակում, իրականում միայն Լվովում, որտեղ առաջացավ հակամարտություն հարուստ լեհերի հետ, և Գդանսկում, որտեղ տեղացի գերմանացիները, տնտեսական մրցակցությունից վախենալով, սահմանափակեցին հայկական բնակեցումը: Ընդհանուր առմամբ, սակայն, հայերի դեպքում մենք չենք տեսնում այնպիսի խնդիրներ, ինչպիսիք ստեղծեց միջնադարյան գերմանական միգրացիան, որը ցանկանում էր փոխարինել Լեհական թագավորության քաղաքական և եկեղեցական էլիտաներին, կամ բազմադարյա հրեական միգրացիաները, որոնք ստեղծեցին համապետական և համահասարակական էթնիկ հակամարտություն:

Այս հարցը մեզ բերում է հաջորդ հարցադրմանը. արդյո՞ք Լեհաստանի հայկական համայնքները վտանգ էին ներկայացնում կամ ստեղծում Լեհաստանի արտաքին քաղաքականության համար, այսինքն՝ այլ պետությունների հետ հարաբերություններում: Այստեղ կրկին համեմատենք նրանց իրավիճակը նման թվաքանակ ունեցող այլ միգրանտների հետ, ինչպիսիք էին թաթարները, որոնք սկզբում

Ulica Ormiańska we Lwowie
Հայկական փողոցը Լվովում

międzywojennych. Powodem był nie tylko dystans geograficzny między Polską i Armenią, ale przede wszystkim rosyjska orientacja w polityce ormiańskiej.

Status Ormian jako wspólnoty w Polsce (Królestwie Polskim) od XIV do XVIII wieku charakteryzował się brakiem uprawnień politycznych, zarówno osobistych, jak też wspólnotowych, a to z uwagi na przynależność do stanu miejskiego, który cały, niezależnie od składu etnicznego, ustrojowo był ich pozbawiony. Arcybiskup ormiański nie uzyskał – nawet po unii z Kościołem katolickim – miejsca w senacie Królestwa Polskiego, które przysługiwały biskupom katolickim obrządku łacińskiego.

W ówczesnej polskiej polityce centralnej Ormianie pojawiali się na sejmach i dworze królewskim niemal wyłącznie jako lobbyści własnych interesów, przy czym były to interesy niepolityczne, a wyłącznie ekonomiczne i kulturowe (religijne), oraz jako usługodawcy na rzecz dyplomacji w stosunkach międzypaństwowych z Orientem (tłumacze, posłowie mniejsi, agenci hetmańscy), a także w administracji skarbowo-podatkowej.

Nawet indywidualny awans polityczny, czyli nobilitacje kilkudziesięciu rodzin ormiańskich, nie nabrał znaczenia politycznego wyższego niż regionalne (tu jako najczynniejszych na sejmikach województwa ruskiego trzeba wspomnieć rodzinę Wieniawskich, czyli dawnych Torosowiczów). Żaden z uszlachconych Ormian nie uzyskał godności senatorskiej (paradoksalnie to Ormianki w paru wypadkach posiadły status senatorskich małżonek). Nie widzimy też uszlachconych Ormian wśród posłów wybranych przez sejmiki do sejmów. Takie funkcje zdarzało się pełnić dopiero ich

բարդացնում էին հարաբերությունները սևծովյան խանությունների հետ, իսկ Լեհաստանի և Օսմանյան կայսրության պատերազմների ժամանակ դրսևորեցին անվստահելիություն, կամ գնչուներն ու հինավուրց հավատքի հետևորդները (ստարավերներ), որոնց ներկայությունը Լեհաստանում առաջացրեց դժգոհություն և միջամտություններ Գերմանական կայսրության (առաջին դեպքում) և Մոսկվայի (երկրորդ դեպքում) կողմից:

Հայերը ոչ միայն նման խնդիր չէին ներկայացնում, այլև համարվում էին շատ օգտակար Պարսկաստանի և Օսմանյան կայսրության հետ քաղաքական հարաբերություններում, իսկ առանձին դրվագներում նույնիսկ նպաստեցին լեհական արտաքին քաղաքականության հորիզոնների միջմայրցամաքային ընդլայնման գաղափարի ձևավորմանը (թագավոր Յան III Սոբեսկու՝ Հայաստանի թագավորությունը վերականգնելու ծրագիրը): Իսկ Հայաստանի անկախության հարցը լեհական քաղաքական գործունեության և քաղաքական մտքի մեջ թույլ արձագանքով սկսեց հնչել XIX դարի 80-ական թվականներից, իսկ փոքր-ինչ ավելի ուժեղ՝ Առաջին համաշխարհային պատերազմից հետո Ռուսաստանի փլուզման շրջանում, սակայն այն չստացավ կարևոր տեղ վերածնված Լեհաստանի դիվանագիտության մեջ և առավել ընդգծված կերպով չարտահայտվեց նույնիսկ միջպատերազմյան տարիների պրոմեթեական շարժման շրջանակներում: Դրա պատճառը ոչ միայն Լեհաստանի և Հայաստանի միջև աշխարհագրական հեռավորությունն էր, այլ առաջին հերթին հայկական քաղաքականության ռուսամետ ուղղվածությունը:

Լեհաստանում (Լեհական թագավորությունում)

wnukom. Wyjątkiem były sejmy elekcyjne, czyli obierające nowych królów, na które mógł się stawić każdy dorosły szlachcic. I tak Jan Wieniawski (do nobilitacji w 1658 roku – Iwaszko Torosowicz, starszy gminy ormiańskiej Lwowa) uczestniczył w elekcji Michała Wiśniowieckiego w 1669 roku, Jana Sobieskiego w 1674 roku i Fryderyka Augusta Wettyna w 1697 roku. W sejmie elekcyjnym 1669 roku uczestniczył także kuzyn Wieniawskiego, Krzysztof, czyli Chaczko Torosowicz, husarz w wojsku koronnym, choć był jeszcze przed swą formalną nobilitacją (w 1685 roku), zapewne uzurpując sobie szlachectwo z racji pokrewieństwa z Janem. Potem ich potomkowie byli posłami na wszystkie kolejne sejmy elekcyjne.

Przełom przyszedł w dobie walki o polityczną emancypację mieszczaństwa i ratowanie niepodległości państwa zagrożonego przez rozbiory pod koniec wieku XVIII. Wprawdzie nie dostrzegamy wtedy nadal ambicji prowadzenia jakiejś ormiańskiej polityki etnicznej w Polsce, ale wielu Ormian angażowało się energicznie w ogólnopolską batalię polityczną, toczącą się w głównym nurcie życia społecznego. Starsi ormiańscy Kamieńca Podolskiego oraz prezydenci Warszawy pochodzenia ormiańskiego (Lwów znajdował się już w utraconym przez Polskę w 1772 roku zaborze austriackim) uczestniczyli w ruchu mieszczańskim doby Sejmu Czteroletniego (1788-1792), choć nadal nie jako posłowie. Widzimy też Ormian w instytucjach administracyjnych insurekcji kościuszkowskiej. Najczynniejsi wtedy to ks. Grzegorz Piramowicz, Paschalis Jakubowicz, Maciej Łyszkiewicz, Franciszek Ksawery Makarewicz, Józef Michał Łukaszewicz, Jędrzej Rafałowicz, Ignacy Dekaprelewicz, Jan Szahin.

հայերի՝ որպես համայնքի կարգավիճակը XIV-XVIII դարերում բնութագրվում էր քաղաքական իրավունքների բացակայությամբ՝ թե՛ անհատական, թե՛ համայնքային մակարդակներում, քանի որ նրանք պատկանում էին քաղաքային դասին, որն ամբողջությամբ, անկախ էթնիկական կազմից, պետական կառուցվածքի առումով զրկված էր այդ իրավունքներից: Հայ արքեպիսկոպոսը Հայ կաթոլիկ եկեղեցու հետ միությունից հետո տեղ չստացավ Լեհական թագավորության սենատում, որը վերապահված էր լատինական ծեսի կաթոլիկ եպիսկոպոսներին:

Այդ ժամանակվա լեհական կենտրոնական քաղաքականության մեջ հայերը հայտնվում էին սեյմերում և թագավորական արքունիքում գրեթե բացառապես որպես սեփական շահերի լոբբիստներ, ընդ որում դրանք քաղաքական շահեր չէին, այլ բացառապես տնտեսական, հարկաբյուջետային և մշակութային (կրոնական) բնույթի, ինչպես նաև որպես ծառայություններ մատուցողներ դիվանագիտության համար՝ Արևելքի հետ միջպետական հարաբերություններում (թարգմանիչներ, ստորին կարգի դեսպաններ, գործակալներ):

Նույնիսկ անհատական քաղաքական առաջխաղացումը, այսինքն՝ մի քանի տասնյակ հայկական ընտանիքների ազնվականացումը, չստացավ տարածաշրջանայինից բարձր քաղաքական նշանակություն (այստեղ, որպես Ռուսական վոյևոդության սեյմիկներում առավել ակտիվ գործիչների, հարկ է հիշատակել Վենյավսկիների ընտանիքը, այսինքն՝ նախկին Թորոսովիչներին): Ազնվականացված հայերից ոչ ոք չստացավ սենատորական աստիճան (պարադոքսալ կերպով, որոշ դեպքերում հենց հայ կանայք ստացան սենատորների կանանց կարգա-

Bernardo Bellotto, „Elekcja Stanisława Augusta” (1778, fragment).
W sejmach elekcyjnych uczestniczyli także przedstawiciele ormiańskiego rodu Wieniawskich (dawniej Torosowiczów).

Բեռնարդո Բելոտտո, «Ստանիսլավ Օգոստոսի ընտրությունը» (1778 թ., հատված):
Ընտրական սեյմերին մասնակցել են նաև հայկական ծագում ունեցող Վենյավսկիների (նախկին Թորոսովիչների) տոհմի ներկայացուցիչները:



Paschalis Jakubowicz
Պասխալիս Յակուբովիչ

Józef Nikorowicz
Յուզեֆ Նիկորովիչ

Antym Marek Nikorowicz
Անթիմ Մարեկ Նիկորովիչ

Kontynuacją tego zjawiska byli pierwsi polscy parlamentarzyści pochodzenia ormiańskiego. Pojawili się oni w sejmach (lat 1809, 1811, 1812) Księstwa Warszawskiego, które cesarz Napoleon utworzył z części ziem dawnej Polski: Paschalis i Aleksander Jakubowiczowie, Walenty Lalewicz (wszyscy jako deputowani z Warszawy) oraz Tomasz Jędrzejowicz (deputowany z powiatów pułtuskiego i wyszogrodzkiego). W grudniu 1827 roku Zgromadzenie Reprezentantów (odpowiednik sejmu) miasta-państwa znanego pod nazwą Rzeczypospolitej Krakowskiej wybrało Józefa Nikorowicza na prezesa Senatu Rządzącego. Jednak rezydenci trzech kontrolujących to państewko mocarstw rozbiorowych (Rosji, Prus, Austrii) odmówili uznania wyboru. Natomiast senatorem nowego Królestwa Polskiego, utworzonego po upadku Księstwa Warszawskiego i pozostającego w unii z Rosją, był od tegoż roku Mikołaj Manugiewicz, biskup rzymskokatolicki augustowski. W pierwszej połowie XIX wieku zasiadali też Ormianie (biskupi i ziemianie) w Sejmie Stanowym Królestwa Galicji i Lodomerii (zabór austriacki dawnej Polski). W sejmie Królestwa Polskiego w czasie wojny z Rosją, czyli powstania listopadowego 1830/1831, posłował z powiatu jampolskiego na Ukrainie Aleksander Bernatowicz, spolonizowany potomek jednego z najbogatszych rodów ormiańskich Lwowa staropolskiego. W kierownictwie politycznym rewolucji polskiej doby Wiosny Ludów w Galicji aż roiło się od Ormian. Wymienić tu trzeba choćby Kornela Krzeczunowicza, Antyma Nikorowicza, Jakuba Jakubowicza. W dobie przygotowań do antyrosyjskiego powstania styczniowego w Królestwie Polskim znaczącą rolę odegrał Jan Bogdanowicz, zastępca członka Komitetu Centralnego w 1862 roku, czystej krwi Ormianin, ziemianin z Lubelskiego. To przykłady, wcale liczne, czynnych ról politycznych, a za wymienionymi tu wybitnymi osobistościami była już rzesza też aktywnych, ale mniej spektakularnych ormiańskich uczestników polityki polskiej w czasach niewoli narodowej.

վիճակ): Մենք նաև չենք տեսնում ազնվականացված հայերի՝ սեյմիկների կողմից սեյմ ուղարկված պատգամավորների թվում: Նման պաշտոններ երբեմն զբաղեցնում էին միայն նրանց թոռները: Բացառություն էին ընտրական սեյմերը, այսինքն՝ նոր թագավոր ընտրող ժողովները, որոնց կարող էր ներկայանալ յուրաքանչյուր չափահաս ազնվական: Այսպես, Յան Վենյավսկին (մինչև 1658 թվականի ազնվականացումը՝ Իվաշկո Թորոսովիչ, Լվովի հայկական համայնքի ավագ) մասնակցել է Միխալ Վիշնևեցկու ընտրությանը 1669 թվականին, Յան Սոբեսկու ընտրությանը՝ 1674 թվականին, և Ֆրիդրիխ Ավգուստ Վետտինի ընտրությանը՝ 1697 թվականին: 1669 թվականի ընտրական սեյմին մասնակցել է նաև Վենյավսկու զարմիկը՝ Քշիշտոֆը, այսինքն՝ Խաչկո Թորոսովիչը, թագավորական բանակի հուսար, թեև դեռևս մինչև իր պաշտոնական ազնվականացումը (1685 թվականին), հավանաբար յուրացնելով ազնվականի կարգավիճակ՝ Յանի հետ ազգակցական կապի հիման վրա: Հետագայում նրանց ժառանգները պատգամավորներ էին բոլոր հաջորդ ընտրական սեյմերում:

Բեկումնային շրջանը եկավ XVIII դարի վերջին՝ քաղաքային դասի էմանսիպացիայի և բաժանումներով սպառնացող պետության անկախության փրկության պայքարի ժամանակաշրջանում: Թեև այդ ժամանակ դեռևս չենք նկատում Լեհաստանում որևէ առանձնահատուկ հայկական էթնիկ քաղաքականություն վարելու ձգտում, բազմաթիվ հայեր ակտիվորեն ներգրավվում էին համալեհական քաղաքական պայքարում, որը ընթանում էր հասարակական կյանքի գլխավոր հոսանքում: Կամենեց-Պոդոլսկիի հայկական ավագանին և հայկական ծագում ունեցող Վարշավայի նախագահները (Լվովն արդեն գտնվում էր 1772 թվականին Լեհաստանի կողմից կորցրած ավստրիական բաժանման տարածքում) մասնակցում էին Չորսամյա սեյմի ժամանակաշրջանի (1788-1792) քաղաքային շարժ-

Mikołaj Jan Manugiewicz, biskup augustowski

Եպիսկոպոս Նիկոլայ Յան Մանուգևիչ, Ավգուստովի եպիսկոպոս



François de Villain, „Detronizacja cara Mikołaja I przez Sejm", 25 stycznia 1831 r.
Ֆրանսուա դը Վիլլեն, «Նիկոլայ I ցարի գահընկեցությունը Սեյմի կողմից», 1831 թ. հունվարի 25

W drugiej połowie XIX wieku Galicja, która uzyskała polską autonomię polityczną w Austrii, stworzyła tamtejszym Ormianom najlepsze warunki czynnego zaistnienia w polityce. Okres od lat 70. tego wieku aż po rok 1918 to apogeum, złote półwiecze, ich politycznego znaczenia. Był to skutek tego, że władzę na tym obszarze dawnej Polski odzyskała historyczna szlachecka elita (ziemianie), do której należało już wiele rodzin ormiańskich. Konserwatywno-liberalny ustrój polityczny Austrii posiadał oparty na kuriach system wyborczy, preferujący ziemiaństwo. Dzięki temu właściciele ziemscy obsadzali większość mandatów do Sejmu Krajowego galicyjskiego, ich reprezentanci znaleźli się też w parlamencie Austrii, a w konsekwencji – w austriackim rządzie centralnym. Tożsamość ormiańską w Galicji tworzył w tym czasie już nie język, ale obrządek religijny (ormiańskokatolicki), pamięć historyczna, a przede wszystkim więź rodzinna. W tę ostatnią poprzez mariaże zostało wciągnięte kilka polskich rodzin, odgrywających ważną rolę w polityce (Zalescy, Pinińscy, Jaworscy, Wielowieyscy – mający ormiańskie matki lub żony), co skutkowało powstaniem klanu ormiańskiego w ramach polityki polskiej. To zjawisko ujawniło się też w drugiej prowincji Austrii – na Bukowinie, sąsiadującej z Galicją, ale nigdy wcześniej nie należącej do Polski.

Przytłaczająca większość polityków ormiańskich w Galicji i na Bukowinie trzymała z tylko jedną polską orientacją ideologiczną – z konserwatystami. Szczególną rolę odegrali na ich najbardziej prawicowym skrzydle, wśród tzw. Podolaków (ziemian Podola w Galicji Wschodniej). Ormiańskość stronnictwa Podolaków wzbudzała niechęć i ostrą krytykę w środowiskach politycznych, które konserwatyści odsunęli od wpływu na władzę w Galicji – demokratów i socjalistów.

Nigdy wcześniej, ani później Ormianie nie grali tak znaczącej roli w polityce polskiej. Dwaj z nich zwłaszcza muszą być tu wymienieni: Kornel Krzeczunowicz, wybitny specjalista od kwestii gospodarczych, rolnych i podatmանը, թեև դեռևս ոչ որպես պատգամավորներ: Մենք նաև տեսնում ենք հայերի՝ Կոշչուշկոյի ապստամբության վարչական հաստատություններում: Այդ ժամանակ առավել ակտիվ գործիչներն էին քահանա Գրիգոր Պիրամովիչը, Պասխալիս Յակուբովիչը, Մացեյ Լիշկևիչը, Ֆրանցիշեկ Քսավերի Մակարևիչը, Յուզեֆ Միխալ Լուկաշևիչը, Ենդժեյ Ռաֆալովիչը, Իգնացի Դեկապրելևիչը և Յան Շահինը:

Այս երևույթի շարունակությունը դարձան հայկական ծագում ունեցող առաջին լեհ խորհրդարանականները: Նրանք հայտնվեցին Վարշավայի դքսության սեյմերում (1809, 1811, 1812 թվականներին), որը Նապոլեոն կայսրը ստեղծել էր նախկին Լեհաստանի տարածքների մի մասից. Պասխալիս և Ալեքսանդր Յակուբովիչները, Վալենտի Լալևիչը (բոլորը՝ որպես Վարշավայից պատգամավորներ), ինչպես նաև Տոմաշ Ենդժեյովիչը (Պուլտուսկի և Վիշոգրոդի շրջանների պատգամավոր): 1827 թվականի դեկտեմբերին Կրակովի Հանրապետություն անունով հայտնի քաղաք-պետության Ներկայացուցիչների ժողովը (սեյմին համարժեք մարմին) Յուզեֆ Նիկորովիչին ընտրեց Կառավարող Սենատի նախագահ: Սակայն այդ փոքր պետությունը վերահսկող երեք բաժանարար տերությունների (Ռուսաստանի, Պրուսիայի և Ավստրիայի) քաղաքացիները հրաժարվեցին ճանաչել ընտրության արդյունքը: Մինչդեռ նույն թվականից նոր Լեհական թագավորության սենատոր էր Նիկոլայ Մանուգևիչը՝ ավգուստովյան հռոմեական կաթոլիկ եպիսկոպոսը, այն թագավորության, որը ստեղծվել էր Վարշավայի դքսության անկումից հետո և գտնվում էր Ռուսաստանի հետ միության մեջ: XIX դարի առաջին կեսին հայերը (եպիսկոպոսներ և կալվածատերեր) մաս էին կազմում նաև Գալիցիայի և Լոդոմերիայի Թագավորության Դասային սեյմում (նախկին Լեհաստանի ավստրիական բաժանման տարածք): Լեհական թագավորության սեյմում Ռուսաստանի դեմ պատերազմի, այսինքն՝ 1830/1831 թվականների Նոյեմբերյան



Akt unii lubelskiej z 1569 roku (Archiwum Główne Akt Dawnych w Warszawie)
1569 թ. Լյուբլինի միության ակտը (Վարշավայի Հին ակտերի գլխավոր արխիվ)

Źródło: Wikipedia / Wikimedia Commons

Gmach austriackiej Rady Państwa w Wiedniu
Ավստրիական Պետական խորհրդի շենքը Վիեննայում

kowych, oraz Dawid Abrahamowicz, przewodniczący izby poselskiej parlamentu wiedeńskiego, czyli Rady Państwa. Obaj też pracowali w Wydziale Krajowym, czyli organie wykonawczym Sejmu Krajowego, zaś Abrahamowicz został przez cesarza mianowany dożywotnim członkiem Izby Panów, czyli izby wyższej parlamentu austriackiego (odpowiednik senatu). Na Bukowinie, gdzie Polacy i katoliccy Ormianie stworzyli jedną wspólnotę narodową nazywaną Armeno-Polakami, liderem politycznym był Grzegorz de Oroszeny Bohdanowicz, zręczny taktyk, twórca stronnictwa polsko-ormiańskiego w tamtejszym Sejmie Krajowym.

W sumie naliczyć można aż 58 Ormian w życiu parlamentarnym Galicji, Bukowiny i Austrii. Widzimy tu kształtowanie się rodów politycznych, które dostarczały polityce po kilku swych przedstawicieli. Na pierwszym miejscu uplasował się ród Jędrzejowiczów, z 4 posłami na Sejm Krajowy (Adam, Edward, Franciszek i Stanisław), z których jeden (Adam) był także posłem do Rady Państwa, czyli izby niższej parlamentu austriackiego w Wiedniu, ministrem austriackim i dożywotnim członkiem Izby Panów. W skali ogólnogalicyjskiej Jędrzejowiczowie uplasowali się na czwartym miejscu pod względem liczebnego i jakościowego udziału w życiu parlamentarnym, zaraz po Dzieduszyckich (10 posłów na Sejm Krajowy), Potockich (7) i Sapiehach (6), wyprzedzając takie historyczne rody staropolskie, jak Tyszkiewiczowie, Sanguszkowie i Zamoyscy. Czterech było też Romaszkanów (arcybiskup ormiański Grzegorz jako wirylista w Sejmie Krajowym, Mikołaj i Zygmunt jako dożywotni członkowie Izby Panów, Jakub jako poseł na Sejm Krajowy), ale nie odegrali tak aktywnej roli jak Jędrzejowiczowie. Trzech było Krzeczunowiczów (poza Kornelem, jeszcze Aleksander i Walerian), czterech – Czaykowskich (w Sejmie Krajowym Alfons i Jan, ten drugi też w parlamencie austriackim, wraz z Hipolitem i Władysławem), trzech – Torosiewiczów (Mikołaj, Emil, Franciszek, dwaj ostatni także w parlamencie austriackim), dwóch – Agopsowiczów (Kajetan, ten także w parlamencie austriackim, i Stanisław), trzech – Abrahamowiczów (Dawid i Eugeniusz, a Krzysztof w Sejmie Krajowym bukowińskim), trzech – Krzysztofowiczów

ապստամբության ժամանակ, Յամպոլի շրջանից պատգամավոր էր Ալեքսանդր Բեռնատովիչը՝ հին Լվովի ամենահարուստ հայկական տոհմերից մեկի լեհացած ժառանգը: Գալիցիայում Ժողովուրդների Գարնան ժամանակաշրջանի լեհական հեղափոխության քաղաքական ղեկավարության մեջ հայերը բառացիորեն շատ էին: Այստեղ պետք է հիշատակել թեկուզ Կոռնել Կշեչունովիչին, Անտիմ Նիկորովիչին, Յակուբ Յակուբովիչին: Լեհական թագավորությունում հակառուսական Հունվարյան ապստամբության նախապատրաստության շրջանում նշանակալի դեր խաղաց Յան Բոգդանովիչը՝ 1862 թվականին Կենտրոնական կոմիտեի անդամի տեղակալը, մաքուր հայկական ծագում ունեցող Լյուբլինի շրջանի կալվածատերը:

Սրանք քաղաքական ակտիվ դերակատարության օրինակներ են, ընդ որում՝ բավականին բազմաթիվ: Այստեղ հիշատակված ականավոր անձանց կողքին գործում էր նաև լեհական քաղաքական կյանքում ներգրավված, ազգային անազատության ժամանակաշրջանում ակտիվ գործունեություն ծավալող, թեև ոչ այնքան աչքի ընկնող, հայ գործիչների մի ստվար շրջանակ:

XIX դարի երկրորդ կեսին Գալիցիան, որը Ավստրիայի կազմում ստացել էր լեհական քաղաքական ինքնավարություն, այնտեղի հայերի համար ստեղծեց քաղաքական կյանքում ակտիվ ներկայության լավագույն պայմանները: Այդ դարի 70-ական թվականներից մինչև 1918 թվականն ընկած ժամանակաշրջանը նրանց քաղաքական դերի գագաթնակետն էր, «ոսկե կեսդարյակը»: Դա պայմանավորված էր նրանով, որ նախկին Լեհաստանի այս տարածքում իշխանությունը վերադարձել էր պատմական ազնվական էլիտային (կալվածատերերին), որոնց կազմում արդեն կային բազմաթիվ հայկական ընտանիքներ: Ավստրիայի պահպանողական-լիբերալ քաղաքական համակարգը ուներ կուրիաների վրա հիմնված ընտրական համակարգ, որը նախապատվություն էր տալիս կալվածատիրությանը: Դրա շնորհիվ հողատերերը զբաղեցնում էին Գալիցիայի Երկրային սեյմի մանդատների մեծամասնությունը, ուստի նրանց ներկայացուցիչնե-

Źródło: Wikipedia / Wikimedia Commons

Piotr Paweł Romaszkan
Պյոտր Պավել Ռոմաշկան

Źródło: Wikipedia / Wikimedia Commons

Antoni Demianowicz
Անտոնի Դեմյանովիչ

Źródło: Wikipedia / Wikimedia Commons

Filip Zaleski
Ֆիլիպ Զալեսկի

(Mikołaj, Jakub i Józef, ci dwaj także w parlamencie austriackim), dwóch – Teodorowiczów (Antoni i arcybiskup Józef jako wirylista), trzech – Łukasiewiczów (Aleksander i Ignacy w Sejmie Krajowym, Franciszek w parlamencie austriackim), też trzech – Bogdanowiczów (Krzysztof w Sejmie Krajowym galicyjskim, Józef w parlamencie austriackim i Kazimierz w Sejmie Krajowym bukowińskim), dwóch – Szymonowiczów (arcybiskup Grzegorz jako wirylista w Sejmie Krajowym galicyjskim, Ignacy jako dożywotni członek Izby Panów), dwóch – Stefanowiczów (Kajetan w Sejmie Krajowym bukowińskim i Stefan z Bukowiny w parlamencie austriackim). Po jednym reprezentancie w życiu parlamentarnym mieli Augustynowiczowie (Bolesław), Bohosiewiczowie (Zachariasz, poseł do Sejmu Krajowego bukowińskiego i do parlamentu austriackiego, członek Izby Panów), Isakowiczowie (arcybiskup Izaak jako wirylista), Kaprich (Jan), Moysa-Rosochaccy (Stefan), Petrowiczowie (Wincenty w parlamencie austriackim).

Pierwszym ministrem pochodzenia ormiańskiego w rządzie austriackim był Filip Zaleski, syn Ormianki (Bołoz Antoniewicz), który zasiadał w gabinecie premiera Edwarda Taaffe (październik 1888 – listopad 1893). Kolejni to: wspomniany już Adam Jedrzejowicz w gabinecie Franza von Thun und Hohensteina (marzec 1898 – październik 1899), Dawid Abrahamowicz w gabinetach Maxa von Becka i Richarda von Bienertha-Schmerlinga (listopad 1907 – marzec 1909), wreszcie Wacław Zaleski (wnuk Ormianek po ojcu i po matce) minister w gabinetach Bienertha-Schmerlinga (drugim), Paula Gautscha i Karla von Stürgkha (styczeń 1911 – październik 1913). Józef Schenk, syn Ormianki, był ministrem sprawiedliwości w rządzie Heinricha von Clam-Matinitza (grudzień 1916 – czerwiec 1917). W Galicji wspomniany już Filip Zaleski był namiestnikiem (szefem administracji krajowej, kimś w rodzaju wicekróla) w latach 1883-1888, a Leon Piniński, syn Ormianki Nikorowiczówny, pełnił ten urząd w latach 1898-1903.

Z galicyjsko-polskich Ormian pochodził Antoni Demianowicz, który osiadł w rosyjskiej Besarabii, nabył

րը հայտնվեցին նաև Ավստրիայի խորհրդարանում, իսկ արդյունքում՝ ավստրիական կենտրոնական կառավարությունում: Այդ ժամանակաշրջանում Գալիցիայում հայկական ինքնությունը ձևավորվում էր արդեն ոչ թե լեզվի, այլ կրոնական ծեսի (հայ կաթոլիկ), պատմական հիշողության և առաջին հերթին՝ ընտանեկան կապերի հիման վրա: Վերջինիս մեջ ամուսնական կապերի միջոցով ներառվել էին քաղաքականության մեջ կարևոր դեր ունեցող մի շարք լեհական ընտանիքներ (Զալեսկիներ, Պինինսկիներ, Յավորսկիներ, Վելովեյսկիներ՝ հայկական ծագում ունեցող մայրերով կամ կանանցով), ինչը հանգեցրեց լեհական քաղաքականության շրջանակներում հայկական կլանի ձևավորմանը: Այս երևույթը դրսևորվեց նաև Ավստրիայի երկրորդ նահանգում՝ Բուկովինայում, որը սահմանակից էր Գալիցիային, սակայն երբեք նախկինում Լեհաստանի մաս չէր կազմել:

Գալիցիայի և Բուկովինայի հայ քաղաքական գործիչների ճնշող մեծամասնությունը հարում էր միայն մեկ լեհական գաղափարական ուղղության՝ պահպանողականներին: Առանձնահատուկ դեր նրանք խաղացին այդ ուղղության առավել աջ թևում՝ այսպես կոչված «Պոդոլականների» շրջանում (Արևելյան Գալիցիայի Պոդոլիայի կալվածատերեր): Պոդոլականների կուսակցության հայկական բնույթը դժգոհություն և սուր քննադատություն էր առաջացնում այն քաղաքական միջավայրերում, որոնք պահպանողականները հեռացրել էին Գալիցիայում իշխանության վրա ազդեցությունից՝ դեմոկրատների և սոցիալիստների շրջանում:

Դրանից առաջ և ոչ էլ հետո հայերը նման նշանակալի դեր չեն խաղացել լեհական քաղաքականության մեջ: Հատկապես պետք է հիշատակել նրանցից երկուսին՝ Կոռնել Կշեչունովիչին՝ տնտեսական, գյուղատնտեսական և հարկային հարցերի ականավոր մասնագետին, ինչպես նաև Դավիթ Աբրահամովիչին՝ վիեննական խորհրդարանի պատգամավորական պալատի, այսինքն՝ Պետական խորհրդի նախագահի պաշտոնը զբաղեցնող գործչին: Եր-

Źródło: Wikipedia / Wikimedia Commons

Leon Piniński
Լեոն Պինինսկի

Źródło: Wikipedia / Wikimedia Commons

Dawid Abrahamowicz
Դավիթ Աբրահամովիչ

tam dobra ziemskie i odegrał ważną rolę polityczną po zmianach wywołanych w Rosji przez rewolucję 1905 roku. Był to monarchista konstytucyjny, obrany posłem z guberni besarabskiej do Dumy Państwowej Rosji podczas wyborów w latach 1906, 1907 i 1912.

Z konserwatywnej orientacji niewielu Ormian polskich się wyłamywało. Takim wyjątkiem był Florian Bogdanowicz, rewolucjonista od czasów studiów szwajcarskich, docent Uniwersytetu Lwowskiego, sympatyzujący z rosyjską Narodną Wolą, za co trafił, aresztowany w Kijowie, na zesłanie w głąb Rosji w latach 80. XIX wieku. Podobnych mu było jeszcze kilku, ale żaden Ormianin w Galicji, na Bukowinie i w Besarabii, wyznający orientację lewicową nie wybił się na znaczniejszą pozycję i nie wszedł do żadnego z miejscowych organów władzy parlamentarnej lub rządowej.

Wizjonerem i strategiem politycznym, którego wpływy przekroczyły wymiary wspólnoty ormiańskiej i granice Galicji, objęły sporą część społeczeństwa polskiego, pozostałe dwa zabory: pruski i rosyjski, a nawet diasporę polską w Ameryce, był arcybiskup lwowski obrządku ormiańskiego Józef Teodorowicz – najwybitniejszy polityk polski pochodzenia ormiańskiego w ogóle, nie tylko praktyk, ale i ideolog polityki oraz autorytet społeczny. To on przekierował sympatie swej wspólnoty z konserwatyzmu ku narodowej i chrześcijańskiej demokracji, Był animatorem inicjatyw polskich w skali ponad zaborowej, politykiem nonkonformistycznym, który nie wahał się sprzeciwić nawet papieżowi, cesarzowi, a potem przywódcy Polski międzywojennej – Józefowi Piłsudskiemu.

Po odzyskaniu przez Polskę niepodległości w 1918 roku nastąpił upadek politycznego znaczenia ziemiaństwa, w tym też tego, pochodzenia ormiańskiego. Jednak nie znikają z polityki Ormianie i Polacy pochodzenia ormiańskiego. W gabinecie Ignacego Jana Paderewskiego, pierwszym stabilnym rządzie polskim, trwającym przez cały rok 1919, ministrem wyznań religijnych i oświecenia publicznego był prof. Jan Łukasiewicz, wybitny filozof. Ale najistotniejsza w tym czasie była

կուսն էլ աշխատել են նաև Երկրային վարչությունում, այսինքն՝ Երկրային սեյմի գործադիր մարմնում, իսկ Աբրահամովիչը կայսեր կողմից նշանակվել է Պարոնների պալատի ցմահ անդամ, այսինքն՝ ավստրիական խորհրդարանի վերին պալատի (սենատին համարժեք մարմնի) անդամ: Բուկովինայում, որտեղ լեհերն ու կաթոլիկ հայերը կազմավորել էին մեկ ազգային համայնք, որը կոչվում էր արմենո-լեհեր, քաղաքական առաջնորդը Գժեգոժ դե Օրոշենի Բոգդանովիչն էր՝ հմուտ տակտիկոս, տեղի Երկրային սեյմում լեհ-հայկական կուսակցության հիմնադիրը:

Ընդհանուր առմամբ, Գալիցիայի, Բուկովինայի և Ավստրիայի խորհրդարանական կյանքում կարելի է հաշվել մինչև 58 հայերի: Այստեղ մենք տեսնում ենք քաղաքական տոհմերի ձևավորում, որոնք քաղաքականությանը տվել են իրենց մի քանի ներկայացուցիչների: Առաջին տեղում էին Ենդժեյովիչների տոհմը՝ Երկրային սեյմի 4 պատգամավորներով (Ադամ, Էդվարդ, Ֆրանցիշեկ և Ստանիսլավ), որոնցից մեկը (Ադամը) նաև Պետական խորհրդի պատգամավոր էր, այսինքն՝ Վիեննայի ավստրիական խորհրդարանի ստորին պալատի անդամ, նախարար և Պարոնների պալատի ցմահ անդամ: Համագալիցիական մասշտաբով Ենդժեյովիչները խորհրդարանական կյանքում քանակային և որակական մասնակցության առումով զբաղեցնում էին չորրորդ տեղը՝ անմիջապես Զեդուշիցկիներից (10 պատգամավոր Երկրային սեյմում), Պոտոցկիներից (7) և Սապիհաներից (6) հետո՝ առաջ անցնելով հին լեհական այնպիսի պատմական տոհմերից, ինչպիսիք էին Տիշկևիչները, Սանգուշկոները և Զամոյսկիները:

Կային նաև չորս Ռոմաշկաններ (հայ արքեպիսկոպոս Գրիգորը՝ որպես virilista Երկրային սեյմում, Նիկոլայը և Զիգմունտը՝ որպես Պարոնների պալատի ցմահ անդամներ, Յակուբը՝ որպես Երկրային սեյմի պատգամավոր), սակայն նրանք այնքան ակտիվ դեր չխաղացին, որքան Ենդժեյովիչները: Երեք Կշեչունովիչներ (Կոռնելից բացի՝ նաև Ալեքսանդր և Վալերիան), չորս՝ Չայկովսկիներ (Երկրային սեյմում Ալֆոնսը և Յանը, որոնցից երկրորդը նաև ավստրիական խորհրդարանում, ինչպես նաև Հիպոլիտը և Վլադիսլավը), երեք Թորոսևիչներ (Նիկոլայ, Էմիլ, Ֆրանցիշեկ, որոնցից վերջին երկուսը նաև ավստրիական խորհրդարանում), երկու Ագոպսովիչներ (Կայետան՝ նաև ավստրիական խորհրդարանում, և Ստանիսլավ), երեք Աբրահամովիչներ (Դավիթ և Եվգենիուշ, իսկ Քշիշտոֆը՝ Բուկովինայի Երկրային սեյմում), երեք Քշիշտոֆովիչներ (Նիկոլայ, Յակուբ և Յուզեֆ, որոնցից վերջին երկուսը նաև ավստրիական խորհրդարանում), երկու Թեոդորովիչներ (Անտոնի և արքեպիսկոպոս Յուզեֆը՝ որպես virilista), երեք Լուկաշևիչներ (Ալեքսանդրը և Իգնացին՝ Երկրային սեյմում, Ֆրանցիշեկը՝ ավստրիական խորհրդարանում), նույնպես երեք Բոգդանովիչներ (Քշիշտոֆը՝ Գալիցիայի Երկրային սեյմում, Յուզեֆը՝ ավստրիական խորհրդարանում և Կազիմեժը՝ Բուկովինայի Երկրային սեյմում), երկու Շիմոնովիչներ (արքեպիսկոպոս Գրիգորը՝ որպես virilista Գալիցիայի Երկրային սեյմում, Իգնացին՝ որպես Պարոնների պալատի ցմահ անդամ), երկու Ստեֆանովիչներ (Կայետանը՝ Բուկովինայի Երկրային սեյմում և Ստեֆանը



Źródło: skarbnica.ormianie.pl

**Józef Teodorowicz,
arcybiskup ormiańskokatolicki Lwowa**

**Յուզեֆ Թեոդորովիչ,
Լվովի հայ կաթոլիկ արքեպիսկոպոս**

Źródło: skarbnica.ormianie.pl

**Arcybiskup Józef Teodorowicz podczas
inauguracji Sejmu Ustawodawczego w 1919 roku**

**Արքեպիսկոպոս Յուզեֆ Թեոդորովիչը 1919 թ.
Սահմանադիր սեյմի բացման ժամանակ**

Źródło: armmuseum

**Pałac arcybiskupów ormiańskich przy
ul. Ormiańskiej 7 we Lwowie w czasie I wojny światowej**

Լվովի Հայկական փողոց 7 հասցեում գտնվող հայոց արքեպիսկոպոսների պալատը՝ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին

**Medal ku czci arcybiskupa Józefa Teodorowicza, 1927 r.
Projekt: Wojciech Przedwojewski
(Zbiory Fundacji Kultury i Dziedzictwa Ormian Polskich)**

Արքեպիսկոպոս Յուզեֆ Թեոդորովիչին նվիրված մեդալ, 1927 թ. Նախագիծ՝ Վոյցեխ Պշեդվոյևսկի (Լեհահայերի մշակույթի և ժառանգության հիմնադրամի հավաքածու)

nieformalna rola arcybiskupa Teodorowicza, który stał za kolejnym gabinetem, premiera Leopolda Skulskiego (grudzień 1919 – czerwiec 1920), i kreował linię polityczną episkopatu katolickiego Polski. W Sejmie Ustawodawczym (1919-1922) znaleźli się: Teodorowicz, wybrany na posła na Podlasiu, i Dawid Abrahamowicz, dokooptowany jako reprezentant Galicji, gdzie wybory nie były możliwe. Arcybiskup Teodorowicz, wybrany w 1922 roku senatorem, złożył mandat w marcu 1923 roku w wyniku interwencji papieża. Do polityków pochodze-

Բուկովինայից՝ ավստրիական խորհրդարանում):

Խորհրդարանական կյանքում մեկական ներկայացուցիչ ունեին Ավգուստինովիչները (Բոլեսլավ), Բոհոսևիչները (Զախարիաշ՝ Բուկովինայի Երկրային սեյմի և ավստրիական խորհրդարանի պատգամավոր, Պարոնների պալատի անդամ), Իսակովիչները (արքեպիսկոպոս Իսահակը՝ որպես virilista), Կապրիխները (Յան), Մոյսա-Ռոսոխացկիները (Ստեֆան), ինչպես նաև Պետրովիչները (Վինցենտին՝ ավստրիական խորհրդարանում):

Ավստրիական կառավարությունում հայկական ծագում ունեցող առաջին նախարարը Ֆիլիպ Զալեսկին էր՝ հայուհի Բոլոզ Անտոնևիչի որդին, որը պաշտոնավարում էր վարչապետ Էդվարդ Տաաֆեի գրասենյակում (1888 թվականի հոկտեմբերից մինչև 1893 թվականի նոյեմբեր): Հաջորդները եղան արդեն հիշատակված Ադամ Ենդժեյովիչը՝ Ֆրանց ֆոն Թուն ունդ Հոհենշտայնի գրասենյակում (1898 թվականի մարտից մինչև 1899 թվականի հոկտեմբեր), Աբրահամովիչը՝ Մաքս ֆոն Բեկի և Ռիխարդ ֆոն Բիներթ-Շմերլինգի կառավարություններում (1907 թվականի նոյեմբերից մինչև 1909 թվականի մարտ), և վերջապես Վացլավ Զալեսկին (հոր և մոր կողմից հայուհիների թոռը)՝ նախարար Բիներթ-Շմերլինգի (երկրորդ), Պաուլ Գաուտշի և Կառլ ֆոն Շտյուրգխի գրասենյակում (1911 թվականի հունվարից մինչև 1913 թվականի հոկտեմբեր): Հայուհու որդի Յուզեֆ Շենկն արդարադատության նախարար էր Հայնրիխ ֆոն Կլամ-Մարտինիցի կառավարությունում (1916 թվականի դեկտեմբերից մինչև 1917 թվականի հունիս): Գալիցիայում արդեն հիշատակված Ֆիլիպ Զալեսկին 1883-1888 թվականներին

Źródło: Wikipedia / Wikimedia Commons

Janusz Jędrzejewicz, premier RP w latach 1933–1934

Յանուշ Ենդժեյևիչ, Լեհաստանի վարչապետ 1933–1934 թթ.

Źródło: Wikipedia / Wikimedia Commons

Wacław Jędrzejewicz, minister wyznań religijnych i oświecenia publicznego

Վացլավ Ենդժեյևիչ, կրոնական դավանանքների և հանրային կրթության նախարար

nia ormiańskiego trzeba jeszcze zaliczyć wybranego też w 1922 roku senatora Maksymiliana Marcelego Thulliego (mimo francuskobrzmiącego nazwiska), bo jego matka była Ormianką (z domu Asłan), podobnie jak żona (z domu Passakas). Był on senatorem z partii chrześcijańsko-demokratycznej przez dwie kadencje.

Przewrót majowy 1926 roku, dojście do władzy Piłsudskiego i jego ludzi, oznaczały zmianę klimatu politycznego i spadek realnego znaczenia prawicy, co przełożyło się na reprezentację środowisk ormiańskich, tradycyjnie związanych z tą stroną sceny politycznej. Jednak nadal w senacie, aż do roku 1935, zasiadał prof. Thullie, a w latach 1928-1930 w tejże izbie towarzyszył mu ks. Samuel Manugiewicz, proboszcz ormiański z Kut. Obaj byli już ostatnimi przedstawicielami tradycyjnej konserwatywno-liberalnej orientacji Ormian polskich. Od tej pory mamy już wyłącznie ludzi związanych z Piłsudskim, których trzeba określić jako niepodległościowców i państwowców o zróżnicowanej linii ideologicznej, reprezentujących w parlamencie polskim Bezpartyjny Blok Współpracy z Rządem. Najbardziej znaczni to dwaj bracia Jędrzejewiczowie, urodzeni na Podolu rosyjskim, więc nie kojarzeni przez opinię publiczną z Ormianami, ale świadomi swego ormiańskiego pochodzenia. Starszy z nich, Janusz, nauczyciel matematyki, dziennikarz i oficer, zasiadał jako poseł w sejmach lat 1928-1935, od sierpnia 1931 do lutego 1934 roku był ministrem wyznań religijnych i oświecenia publicznego, i wreszcie przez rok, od maja 1933 do maja 1934 – premierem Polski. Młodszy Jędrzejewicz, Wacław, zastąpił brata w lutym 1933 roku jako minister i sprawował tę funkcję do października 1935. W kadencji parlamentarnej 1930-1935 posłem był Ormianin z pochodzenia i przekonań – Zygmunt Tebinka, choć urodzony w Galicji to wybrany do sejmu z Pomorza, gdzie mieszkał, oficer, związany z wywiadem wojskowym. W tej samej kadencji był jeszcze senatorem Alfred

եղել է նահանգապետ (երկրային վարչակազմի ղեկավար, մի տեսակ փոխարքա), իսկ Լեոն Պինինսկին՝ հայուհի Նիկորովիչի որդին, այդ պաշտոնը զբաղեցրել է 1898-1903 թվականներին:

Գալիցիացի լեհահայերից էր Անտոնի Դեմյանովիչը, որը հաստատվել էր ռուսական Բեսարաբիայում, այնտեղ ձեռք բերել կալվածքներ և կարևոր քաղաքական դեր խաղացել 1905 թվականի հեղափոխությունից հետո Ռուսաստանում տեղի ունեցած փոփոխությունների ընթացքում: Նա սահմանադրական միապետական էր, որը Բեսարաբիայի նահանգից ընտրվել էր Ռուսաստանի Պետական դումայի պատգամավոր 1906, 1907 և 1912 թվականների ընտրություններում:

Լեհահայերից քչերն էին դուրս գալիս պահպանողական ուղղվածության շրջանակներից: Այդպիսի բացառություն էր Ֆլորյան Բոգդանովիչը՝ շվեյցարական ուսանողական տարիներից հեղափոխական, Լվովի համալսարանի դոցենտ, որը համակրում էր ռուսական «Նարոդնայա Վոլյա»-ին, ինչի համար Կիևում ձերբակալվելուց հետո 1880-ական թվականներին աքսորվեց Ռուսաստանի խորքերը: Նրա նման ևս մի քանի հոգի կային, սակայն Գալիցիայում, Բուկովինայում և Բեսարաբիայում ձախակողմյան ուղղվածություն ունեցող ոչ մի հայ չհասավ նշանակալի դիրքի և չմտավ տեղական խորհրդարանական կամ կառավարական իշխանության որևէ մարմին:

Քաղաքական տեսաբան և ռազմական փորձագետ, որի ազդեցությունը դուրս էր գալիս հայկական համայնքի և Գալիցիայի սահմաններից՝ ընդգրկելով լեհական հասարակության զգալի մասը, լեհական մյուս երկու բաժանումները՝ պրուսական և ռուսական, և նույնիսկ Ամերիկայի լեհական սփյուռքը, Լվովի հայկական ծեսի արքեպիսկոպոս Յուզեֆ Թեոդորովիչն էր: Նա, ընդհանուր առմամբ, հայկական ծագում ունեցող ամենանշանավոր լեհ քաղաքական գործիչներից էր՝ հանդես գալով ոչ միայն որպես քաղաքական գործիչ-պրակտիկ, այլև որպես քաղաքական գաղափարախոս և հասարակական հեղինակություն: Հենց նա էր, որ իր համայնքի համակրանքը պահպանողականությունից ուղղեց դեպի ազգային և քրիստոնեական ժողովրդավարություն: Նա լեհական նախաձեռնությունների համաբաժանարար մասշտաբով գլխավոր խթանողներից էր՝ որպես ոչ կոնֆորմիստ քաղաքական գործիչ, որը չէր վարանել ընդդիմանալ անգամ պապին, կայսրին, իսկ հետագայում՝ նաև միջպատերազմյան Լեհաստանի առաջնորդ Յուզեֆ Պիլսուդսկուն:

1918 թվականին Լեհաստանի անկախության վերականգնումից հետո տեղի ունեցավ կալվածատիրության քաղաքական նշանակության անկում, այդ թվում՝ նաև հայկական ծագում ունեցող կալվածատիրության: Սակայն քաղաքականությունից չվերացան հայերը և հայկական ծագում ունեցող լեհերը: Իգնացի Յան Պադերևսկու գրասենյակում՝ առաջին կայուն լեհական կառավարությունում, որը գործեց ամբողջ 1919 թվականի ընթացքում, կրոնական դավանանքների և հանրային կրթության նախարարն էր ականավոր փիլիսոփա պրոֆեսոր Յան Լուկաշևիչը: Սակայն այդ ժամանակաշրջանում առավել կա-

Źródło: Wikipedia / Wikimedia Commons

Kornel Krzeczunowicz, ziemianin i poseł na Sejm RP

Կոռնել Կշեչունովիչ, կալվածատեր և Լեհաստանի Սեյմի պատգամավոր

Źródło: Wikipedia / Wikimedia Commons

Zygmunt Tebinka, poseł na Sejm RP

Զիգմունտ Տեբինկա, Լեհաստանի Սեյմի պատգամավոր

Źródło: Wikipedia / Wikimedia Commons

Dwór Kornela Krzeczunowicza w Bołszowcach koło Stanisławowa

Կոռնել Կշեչունովիչի դաստակերտը Ստանիսլավովի մոտ գտնվող Բոլշովցեում

Ohanowicz, także bezdyskusyjny Ormianin, prawnik, profesor z Poznania. Po śmierci Piłsudskiego rola polityczna braci Jędrzejewiczów gwałtownie się skończyła, ich liberalne poglądy nie przystawały do nowego kursu. Wacław Jędrzejewicz egzystował jeszcze na marginesie swego obozu politycznego jako senator w kadencji 1935-1938. W tej samej kadencji posłem został pułkownik Kornel Krzeczunowicz. Z jego osobą wróciło do polityki ziemiaństwo ormiańskie, gdyż pochodził ze znanej rodziny właścicieli ziemskich z dawnej Galicji, sprzyjającej poglądom prawicowym. Był właścicielem dóbr Bołszowce.

Po wojnie na emigracji Wacław Jędrzejewicz był m. in. w 1948 roku prezesem Rady Naczelnej Ligi Niepodległości Polski (kontynuowała ona działalność istniejącego od 1942 Związku Piłsudczyków). Kornel Krzeczunowicz w 1954 roku wszedł w skład Tymczasowej Rady Jedności Narodowej – polskiego parlamentu na wychodźstwie.

W kraju środowiska ormiańskie angażowały się w podziemiu, najpierw w czasie okupacji antyniemieckim, po wojnie – antysowieckim, kierowanym przez rząd na wychodźstwie. Zdarzały się też wyjątki. Jan Szymon

րևոր էր արքեպիսկոպոս Թեոդորովիչի ոչ պաշտոնական դերը, որը կանգնած էր վարչապետ Լեոպոլդ Սկուլսկու հաջորդ կառավարության հետևում (1919 թվականի դեկտեմբերից մինչև 1920 թվականի հունիս) և ձևավորում էր Լեհաստանի կաթոլիկ եպիսկոպոսության քաղաքական գիծը: Օրենսդիր սեյմում (1919-1922) ընդգրկվեցին Թեոդորովիչը՝ ընտրված պատգամավոր Պոդլասիեից, և Դավիթ Աբրահամովիչը, որը
ներգրավվել էր որպես Գալիցիայի ներկայացուցիչ, որտեղ ընտրություններ անցկացնել հնարավոր չէր: Արքեպիսկոպոս Թեոդորովիչը, որը 1922 թվականին ընտրվել էր սենատոր, 1923 թվականի մարտին պապի միջամտության արդյունքում վայր դրեց մանդատը: Հայկական ծագում ունեցող քաղաքական գործիչների շարքին պետք է դասել նաև նույն 1922 թվականին ընտրված սենատոր Մաքսիմիլիան Մարչել Թուլլիին (չնայած ֆրանսիական հնչողություն ունեցող ազգանվանը), քանի որ նրա մայրը հայուհի էր (օրիորդական ազգանունը՝ Ասլան), ինչպես նաև կինը (օրիորդական ազգանունը՝ Պասսակաս): Նա քրիստոնյա-դեմոկրատական կուսակցությունից երկու գումարման սենատոր էր:

1926 թվականի մայիսյան հեղաշրջումը, Պիլսուդսկու և նրա կողմնակիցների իշխանության գալը նշանակեցին քաղաքական մթնոլորտի փոփոխություն և աջ ուժերի քաղաքական ազդեցության անկում, ինչը անդրադարձավ նաև հայկական շրջանակների ներկայացվածության վրա, որոնք ավանդաբար կապված էին քաղաքական բեմի այդ հատվածի հետ: Այնուամենայնիվ, մինչև 1935 թվականը սենատում էր պրոֆեսոր Թուլլին, իսկ 1928-1930 թվականներին նույն պալատում նրան ուղեկցում էր քահանա Սամուել Մանուգևիչը՝ Կուտ քաղաքի հայկական ծխական քահանան: Երկուսն էլ արդեն լեհահայերի ավանդական պահպանողական-լիբերալ ուղղվածության վերջին ներկայացուցիչներն էին: Այդ ժամանակից սկսած մենք արդեն գործ ունենք բացառապես Պիլսուդսկուն առնչվող մարդկանց հետ, որոնց պետք է բնութագրել որպես անկախականներ և պետականամետներ՝ տարբեր գաղափարական ուղղվածություններով, որոնք լեհական խորհրդարանում ներկայացնում էին Կառավարության հետ համագործակցության անկուսակցական բլոկը:

Առավել նշանակալի էին Ենդժեյևիչ եղբայրները, որոնք ծնվել էին ռուսական Պոդոլիայում, ուստի հասարակական կարծիքի կողմից չէին ասոցացվում հայերի հետ, սակայն գիտակցում էին իրենց հայկական ծագումը: Ավագը՝ Յանուշը, մաթեմատիկայի ուսուցիչ, լրագրող և սպա, պատգամավոր էր 1928-1935 թվականների սեյմերում, 1931 թվականի օգոստոսից մինչև 1934 թվականի փետրվար զբաղեցրել է կրոնական դավանանքների և հանրային կրթության նախարարի պաշտոնը, և վերջապես մեկ տարի՝ 1933 թվականի մայիսից մինչև 1934 թվականի մայիս, եղել է Լեհաստանի վարչապետը: Կրտսեր Ենդժեյևիչը՝ Վացլավը, 1933 թվականի փետրվարին փոխարինեց եղբորը նախարարի պաշտոնում և այդ պաշտոնը զբաղեցրեց մինչև 1935 թվականի հոկտեմբեր:

Źródło: Wikipedia / Wikimedia Commons

Alfred Ohanowicz, prawnik, profesor Uniwersytetu Poznańskiego i senator RP

Ալֆրեդ Օհանովիչ, իրավաբան, Պոզնանի համալսարանի պրոֆեսոր և Լեհաստանի սենատոր

Źródło: Wikipedia / Wikimedia Commons

Samuel Manugiewicz, duchowny ormiańskokatolicki i senator RP

Սամուել Մանուգևիչ, հայ կաթոլիկ հոգևորական և Լեհաստանի սենատոր

Manugiewicz, etnograf pochodzący z warszawskiej ormiańskiej rodziny kupieckiej, był w czasie drugiej wojny światowej współzałożycielem i czołowym działaczem lewicowego Komitetu Inicjatywy Narodowej, wszedł do konspiracyjnej Krajowej Rady Narodowej, prosowieckiej reprezentacji parlamentarnej, utworzonej przez komunistów na przełomie 1943 i 1944 roku, i zasiadał w niej jako poseł w okresie działalności jawnej. Po jej likwidacji w styczniu 1947 roku zajął się działalnością muzealniczą. W późniejszym czasie był zaangażowany w próby założenia nowej organizacji ormiańskiej w Polsce.

Niepodległa Polska po upadku komunizmu to temat wciąż otwarty. Potomkowie dawnych Ormian polskich, gdy chodzi o orientacje polityczne, są obecnie podzieleni pomiędzy chyba wszystkie partie i ideologie, jakie w Polsce istnieją. Jest to zjawisko niełatwe do analizy, gdyż nie sposób prześledzić opcje polityczne społeczności tak rozproszonej terytorialnie i tak mocno zintegrowanej ze społeczeństwem polskim, jak Ormianie. Można co najwyżej wspomnieć o tych osobach w przestrzeni politycznej, które zajmują istotne stanowiska lub artykułują publicznie swe przekonania, a mają wyraźne ormiańskie korzenie.

Byli to lub są: Andrzej Krzeczunowicz, w latach 1992-1997 ambasador polski w Belgii i Luksemburgu oraz stały przedstawiciel przy NATO i Unii Zachodnioeuropejskiej, a co istotniejsze – członek zespołu rządowego prowadzącego negocjacje w sprawie wejścia Polski do NATO; Waldemar Manugiewicz, uczestnik obrad Okrągłego Stołu po stronie koalicyjno-rządowej (luty – kwiecień 1989), wiceminister finansów Polski (1992-1998), doradca prezydenta Aleksandra Kwaśniewskiego; Wojciech Mojzesowicz, rolnik, działacz „Solidarności" (1981), od 1989 przez kilka kadencji poseł na sejm, najpierw z ramienia Zjednoczonego Stronnictwa Ludowego i jego kontynuatora – Polskiego Stronnictwa

1930-1935 թվականների խորհրդարանական գումարման ընթացքում պատգամավոր էր հայկական ծագում և համոզմունքներ ունեցող Զիգմունտ Տեբինկան. թեև ծնված էր Գալիցիայում, սակայն պատգամավոր էր ընտրվել Պոմորիեից, որտեղ բնակվում էր: Նա սպա էր և կապված էր ռազմական հետախուզության հետ: Նույն գումարման ընթացքում սենատոր էր նաև Ալֆրեդ Օհանովիչը՝ անվիճելիորեն հայ, իրավաբան և Պոզնանի պրոֆեսոր:

Պիլսուդսկու մահից հետո Ենդժեյևիչ եղբայրների քաղաքական դերը կտրուկ ավարտվեց, քանի որ նրանց լիբերալ հայացքները չէին համապատասխանում նոր քաղաքական ուղղությանը: Վացլավ Ենդժեյևիչը դեռևս գոյատևում էր իր քաղաքական ճամբարի լուսանցքում՝ որպես 1935-1938 թվականների գումարման սենատոր: Նույն գումարման ընթացքում պատգամավոր դարձավ գնդապետ Կոռնել Կշեչունովիչը: Նրա անձով հայկական կալվածատիրությունը վերադարձավ քաղաքականություն, քանի որ նա ծագում էր նախկին Գալիցիայի հայտնի հողատերերի ընտանիքից, որը համակրում էր աջակողմյան հայացքներին: Նա Բոլշովցեի կալվածքների սեփականատերն էր:

Վացլավ Ենդժեյևիչը 1948 թվականին եղել է Լեհաստանի Անկախության լիգայի Գերագույն խորհրդի նախագահը (այդ կազմակերպությունը շարունակել էր 1942 թվականից գործող Պիլսուդսկիականների միության գործունեությունը): Կոռնել Կշեչունովիչը 1954 թվականին ընդգրկվեց Ազգային միասնության ժամանակավոր խորհրդի կազմում՝ արտասահմանում գործող լեհական խորհրդարանում:

Երկրում հայկական շրջանակները ներգրավված էին ընդհատակյա գործունեության մեջ՝ նախ գերմանական օկուպացիայի դեմ ուղղված դիմադրության շրջանակներում, իսկ պատերազմից հետո՝ արտագաղթի կառավարության ղեկավարած հակախորհրդային ընդհատակյա պայքարում: Սակայն լինում էին նաև բացառություններ. Յան Չիմոն Մանուգևիչը՝ ազգագրագետ, որը ծագում էր Վարշավայի հայկական առևտրական ընտանիքից, Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում եղել է ձախակողմյան Ազգային նախաձեռնության կոմիտեի համահիմնադիրներից և առաջատար գործիչներից մեկը, ընդգրկվել է ընդհատակյա Ազգային խորհրդում՝ խորհրդամետ խորհրդարանական ներկայացուցչությունում, որը ստեղծվել էր կոմունիստների կողմից 1943 և 1944 թվականների սահմանագծին, և դրա բաց գործունեության ընթացքում այնտեղ զբաղեցրել է պատգամավորի պաշտոն: 1947 թվականի հունվարին այդ մարմնի լուծարումից հետո նա զբաղվել է թանգարանային գործունեությամբ: Հետագայում նա ներգրավված էր Լեհաստանում նոր հայկական կազմակերպություն ստեղծելու փորձերում:

Կոմունիզմի անկումից հետո անկախ Լեհաստանում լեհահայերի գործունեությունը բաց թեմա է դառնում ուսումնասիրության համար: Պատմական լեհահայերի ժառանգները ներկայումս ներկայացված են երկրի գրեթե բոլոր կուսակցություններում ու գաղափարախոսություններում: Սա վերլուծության

Fot. M. Nabrdalik

Wojciech Mojzesowicz
Վոյցեխ Մոյժեսովիչ

Fot. S. Kaczorek, Senat RP

Łukasz Abgarowicz
Լուկաշ Աբգարովիչ

Źródło: Wikipedia / Wikimedia Commons

Waldemar Manugiewicz podczas obrad Okrągłego Stołu w Warszawie w 1989 roku (pośrodku, w jasnym płaszczu)

Վալդեմար Մանուգևիչը 1989 թ. Վարշավայում Կլոր սեղանի բանակցությունների ժամանակ (կենտրոնում՝ բաց գույնի վերարկուով)

Ludowego, potem „Samoobrony", wreszcie Prawa i Sprawiedliwości, przez kilka miesięcy w 2007 roku minister rolnictwa w gabinecie Jarosława Kaczyńskiego; Łukasz Abgarowicz, pochodzący z rodziny ziemiańskiej, zootechnik i przedsiębiorca, działacz „Solidarności", po 1989 roku zaś – Ruchu Obywatelskiego Akcji Demokratycznej, Unii Demokratycznej, Unii Wolności i Platformy Obywatelskiej (dziś: Koalicji Obywatelskiej), senator w latach 2007-2015; ksiądz Tadeusz Isakowicz-Zaleski – wprawdzie nie pełniący żadnych funkcji politycznych, ale uznany autorytet w sprawach społecznych, zarówno tych ogólnopolskich, jak i ormiańskich.

Powyżej wymienione osobistości to tylko wyznaczniki kierunków i skali zaangażowania politycznego współczesnych Ormian w Polsce. Za nimi funkcjonuje całkiem spora rzesza aktywnych działaczy samorządu terytorialnego, administracji rządowej szczebla centralnego i wojewódzkiego, partii politycznych, dyplomacji. Polityka polska nie przestaje mieć swego ormiańskiego nurtu. A przecież w tym zarysie nie uwzględniłem ani samorządu, ani dyplomacji, czyli dziedzin mających bezdyskusyjnie polityczny charakter. Zbyt jednak bogaty był udział Ormian w tych zakresach od czasów staropolskich aż po współczesne, aby go tu choć naszkicować.

Fotografie wykorzystane w artykule pochodzą z wystawy „Ormianie w dziejach parlamentaryzmu polskiego".

Հոդվածում օգտագործված լուսանկարները վերցված են «Հայերը լեհական խորհրդարանականության պատմության մեջ» ցուցահանդեսից:

համար հեշտ երևույթ չէ. հնարավոր չէ հետևել այնպիսի տարածքային առումով ցրված և լեհական հասարակության հետ այդքան սերտորեն ինտեգրված համայնքի քաղաքական ընտրություններին, ինչպիսին հայերն են: Առավելագույնը կարելի է հիշատակել քաղաքական տարածքում այն անձանց, որոնք զբաղեցնում են կարևոր պաշտոններ կամ հրապարակայնորեն արտահայտում են իրենց համոզմունքները և ունեն հստակ հայկական արմատներ:

Այդպիսիք եղել են կամ են՝ Անջեյ Կշեչունովիչը, որը 1992-1997 թվականներին Լեհաստանի դեսպանն էր Բելգիայում և Լյուքսեմբուրգում, ինչպես նաև ՆԱՏՕ-ում և Արևմտաեվրոպական միությունում մշտական ներկայացուցիչը, և, որ առավել կարևոր է, Լեհաստանի ՆԱՏՕ-ին անդամակցության բանակցություններ վարող կառավարական խմբի անդամը: Վալդեմար Մանուգևիչը՝ Կլոր սեղանի բանակցությունների մասնակիցը կառավարական-կոալիցիոն կողմում (1989 թվականի փետրվար-ապրիլ), Լեհաստանի ֆինանսների փոխնախարարը (1992-1998), նախագահ Ալեքսանդր Կվասնևսկու խորհրդականը: Վոյցեխ Մոյժեսովիչը՝ գյուղատնտես, «Համերաշխություն» շարժման գործիչ (1981), 1989 թվականից մի քանի գումարումների ընթացքում սեյմի պատգամավոր՝ սկզբում Միացյալ գյուղացիական կուսակցության և դրա իրավահաջորդ Լեհական գյուղացիական կուսակցության, ապա՝ «Ինքնապաշտպանություն» շարժման, իսկ վերջում՝ «Իրավունք և արդարություն» կուսակցության կողմից, 2007 թվականին մի քանի ամիս եղել է գյուղատնտեսության նախարար Յարոսլավ Կաչինսկու կառավարությունում: Լուկաշ Աբգարովիչը՝ կալվածատիրական ընտանիքից սերող անասնաբույծ և ձեռնարկատեր, «Համերաշխության» գործիչ, իսկ 1989 թվականից հետո՝ Քաղաքացիական գործողություն ժողովրդավարական շարժման, Ժողովրդավարական միության, Ազատության միության և Քաղաքացիական պլատֆորմի (ներկայում՝ Քաղաքացիական կոալիցիա) անդամ, 2007-2015 թվականներին սենատոր: Քահանա Թադեուշ Իսակովիչ-Զալեսկին՝ թեև երբևէ քաղաքական պաշտոն չի զբաղեցրել, սակայն ճանաչված հեղինակություն էր հասարակական հարցերում՝ ինչպես համապետական, այնպես էլ հայկական թեմաների շրջանակում:

Վերոնշյալ անձինք միայն ժամանակակից Լեհաստանի հայերի քաղաքական ներգրավվածության ուղղությունների և մասշտաբների ցուցիչներն են: Նրանց հետևում գործում է տարածքային ինքնակառավարման, կենտրոնական և վոյևոդական մակարդակի պետական վարչակազմի, քաղաքական կուսակցությունների և դիվանագիտության ակտիվ գործիչների բավական լայն շրջանակ: Լեհական քաղաքականությունը չի դադարում ունենալ իր հայկական հոսանքը: Եվ դեռ այս ուրվագծում ես չեմ անդրադարձել ոչ ինքնակառավարմանը, ոչ էլ դիվանագիտությանը, այսինքն՝ ոլորտների, որոնք անվիճելիորեն ունեն քաղաքական բնույթ: Իսկ ինքնակառավարմանն ու դիվանագիտությանը լեհահայերի մասնակցությունը՝ հին ժամանակներից մինչ մեր օրերը, չափազանց հարուստ է այստեղ թեկուզ ուրվագծելու համար:

Wydawca:

INSTYTUT ORMIAŃSKI
ՀԱՅԿԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ormiańsko-Polski Komitet Społeczny
Erste Bank Polska
PL 91 1090 1766 0000 0001 4874 0165

Numer zamknięto 28.08.2026 r.

Adres Redakcji: Wolności 311, II piętro, 41-800 Zabrze
e-mail: redakcja@munetik.pl

Druk: Drukarnia Advert, ul. Krakowska 21-23, 41-503 Chorzów
Nakład 1000 egz., ilość stron 36.

Rada Redakcyjna:
Hraczja Bojadżjan (przewodniczący)
prof. Grzegorz Paweł Pełczyński (Uniwersytet im. Adama Mickiewicza)
prof. Krzysztof Stopka (Uniwersytet Jagielloński)
dr hab. Krzysztof Fedorowicz (Uniwersytet im. Adama Mickiewicza)
dr hab. Renata Król-Mazur (Uniwersytet Jagielloński)
dr hab. Adam Pomieciński (Uniwersytet im. Adama Mickiewicza)
dr hab. Andrzej A. Zięba (Uniwersytet Jagielloński)
dr Andrzej Gliński (Instytut Piramowicza)
dr Tomasz Krzyżowski (Uniwersytet Jagielloński)
dr Dominika Maria Macios
dr Marek Miławicki OP (Dominikański Instytut Historyczny)
dr Witold Repetowicz (Akademii Sztuki Wojennej)
dr Jerzy Szokalski
Narine Baghdasaryan
Narek Baghdasaryan
Diana Howakimian (Komisarz ds. Diaspory RA w Polsce)
Edyta Glińska
Piotr Oczkowski
ks. Atanas Sarkisjan
Krzysztof Mojzesowicz (Towarzystwo Ormian Polskich)

Czasopismo powstaje we współpracy z:

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
Instytutem Starożytnych Rękopisów im. Mesropa Masztoca – Matenadaran w Erywaniu

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Biblioteką Narodową Republiki Armenii

BIBLIOTEKA JAGIELLOŃSKA
Յագելոնյան գրադարան

Materiałów zamieszczonych w czasopiśmie mniejszości ormiańskiej MUNETIK nie można w żadnej formie reprodukować bez pisemnej zgody Wydawcy.

ՄՈՒՆԵՏԻԿ հանդեսում տպագրված նյութերը որևէ եղանակով չեն կարող վերատպվել առանց հրատարակչի գրավոր համաձայնության:

Publikacja wyraża jedynie poglądy autorów i nie może być utożsamiana z oficjalnym stanowiskiem Ministra Spraw Wewnętrznych i Administracji.

Հրապարակումը արտահայտում է միայն հեղինակների տեսակետները և չի կարող նույնացվել Ներքին գործերի և վարչարարության նախարարության պաշտոնական դիրքորոշման հետ:

Ministerstwo Spraw Wewnętrznych I Administracji
Dofinansowano ze środków Ministra Spraw Wewnętrznych i Administracji

Ministerstwo Kultury i Dziedzictwa Narodowego
Dofinansowano ze środków Ministra Kultury i Dziedzictwa Narodowego pochodzących z Funduszu Promocji Kultury – państwowego funduszu celowego

Zadanie realizowane ze środków budżetu państwa



Fot. wikimedia.org

- SALA SENATORSKA ZAMKU KRÓLEWSKIEGO W WARSZAWIE. MIEJSCE OBRAD SEJMU CZTEROLETNIEGO I UCHWALENIA KONSTYTUCJI 3 MAJA W 1791 R. W PRACACH NAD KONSTYTUCJĄ ORAZ W ÓWCZESNYM RUCHU MIESZCZAŃSKIM AKTYWNIE UCZESTNICZYLI POLSCY ORMIANIE.
- OBRAZ KAZIMIERZA WOJNIAKOWSKIEGO PRZEDSTAWIAJĄCY UCHWALENIE KONSTYTUCJI 3 MAJA 1791 R.
- WSPÓŁCZESNY WYGLĄD SALI SENATORSKIEJ.

- ՎԱՐՇԱՎԱՅԻ ԹԱԳԱՎՈՐԱԿԱՆ ԱՄՐՈՑԻ ՍԵՆԱՏՈՐԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԸ: ԱՅՍՏԵՂ ԵՆ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԵԼ ՔԱՌԱՄՅԱ ՍԵՅՄԻ ՆԻՍՏԵՐԸ, ԵՎ 1791 Թ. ԸՆԴՈՒՆՎԵԼ Է ՄԱՅԻՍԻ 3-Ի ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ: ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՅՑ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՇԱՐԺՄԱՆԸ ԱԿՏԻՎՈՐԵՆ ՄԱՍՆԱԿՑԵԼ ԵՆ ԼԵՀԱՀԱՅԵՐԸ:
- ԿԱԶԻՄԵԺ ՎՈՅՏԱՀԱԿՈՎՍԿՈՒ ԿՏԱՎԸ, ՈՐԸ ՊԱՏԿԵՐՈՒՄ Է 1791 Թ. ՄԱՅԻՍԻ 3-Ի ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ:
- ՍԵՆԱՏՈՐԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻ ՆԵՐԿԱՅԻՍ ՏԵՍՔԸ: